Գիտություն

ԴԵԿՏԵՄԲԵՐ

№ 7

(194)

2006 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ԸՆՏՐՎԵՑԻՆ ՀՀ ԳԱԱ ՆՈՐ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐ

Դեկտեմբերի 14-ին ՀՀ ԳԱԱ բաժանմունքներում անցկացվեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամության թեկնածուների ընտրություններ: Իսկ դեկտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը բաժանմունքներում ընտրված թեկնածուներին ընտրեց ակադեմիայի թղթակից անդամներ

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

1. *Ֆիզիկա* մասնագիտության գծով — Սիրունյան Ալբերտ
2. *Ֆիզիկա* — Իշխանյան Արքուր
3. *Աստղաֆիզիկա* — Ավագյան Ռոլան
4. *Կիսահաղորդչային ֆիզիկա և էլեկտրոնիկա* — Կարայան Համլետ
5. *Լազերային ֆիզիկա* — Կոստանյան Ռուդիկ, Կրյուչկյան Գագիկ
6. Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա — Կիրակոսյան Ալբերտ

ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի, մեխանիկայի և ինֆորմատիկայի բաժանմունք

1. *Մաթեմատիկա* — Մարտիրոսյան Վալերի
2. *Մաթեմատիկա* — Սահակյան Արքուր
3. *Մեխանիկա* — Սարգսյան Սամվել
4. *Մեխանիկա* — Ավետիսյան Արա
5. Գյուղատնտեսական մեքենաշինություն — Թարվերդյան Արշալույս

Ինֆորմատիկա մասնագիտության գծով դիմել էին 3 թեկնածուներ՝ Վլադիմիր Առուստամյանը, Եվգենի Հարությունյանը, Արկադյա Սարգսյանը: Երկրորդ փուլ անցան Վլադիմիր Առուստամյանը և Եվգենի Հարությունյանը: Սակայն երկրորդ փուլի արդյունքներով չընտրվեց ոչ մեկը:

ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

1. *Պատմություն* — Մելքոնյան Աշոտ
2. *Պատմություն* — Հարությունյան Բաբկեն
3. *Հնագիտություն* — Սիմոնյան Արամ
4. *Ազգագրություն* — Քալանթարյան Արամ
5. *Սոցիոլոգիա* — Աբրահամյան Լևոն
6. *Գրականագիտություն* — Պողոսյան Գևորգ
7. *Լեզվաբանություն* — Անանյան Գառնիկ
8. *Արվեստագիտություն* — Սարգսյան Արտեմ
9. *Արվեստագիտություն* — Հասրաթյան Մուրադ
10. *Տնտեսագիտություն* — Հովհաննիսյան Հենրիկ
11. *Իրավունք* — Սուվարյան Յուրի
12. *Փիլիսոփայություն* — Ղազինյան Գագիկ
13. *Արևելագիտություն* — Մանասյան Ալեքսանդր
14. *Տնտեսագիտություն* — Հովհաննիսյան Նիկոլայ, Դարբինյան Արմեն

ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունք

1. *Կենսաֆիզիկա* — Թռչունյան Արմեն
2. *Ֆիզիկական և անօրգանական քիմիա* — Դավթյան Սևան
3. *Կենսատեխնոլոգիա* — Հակոբյան Ժան
4. *Կենսատեխնոլոգիա* — Սաղյան Աշոտ
5. *Կենսաֆիզիկա* — Գևորգյան Էմիլ
6. *Գենետիկա* — Հարությունյան Ռուբեն
7. *Շրջակա միջավայրի ուսումնասիրություն* — Հովհաննիսյան Ռաֆիկ
8. *Տեսական բժշկություն* — Մելիքյան Արմեն
9. *Երկրաֆիզիկա* — Հովհաննիսյան Սևադա

Օրգանական քիմիա մասնագիտությունների գծով չի ընտրվել ոչ մեկը:

Ա. Շահինյանի դիմանկարը
գործ Մարտիրոս Սարյանի, 1960թ.

ՍԵՑԱՐՈՒՄ

Ակադեմիկոս Արտաշես Լիպարիտի Շահինյանը մեծ ավանդ ունի հայրենի գիտության և բարձրագույն կրթության զարգացման մեջ: Նա հանդիսանում է Հայաստանում ժամանակակից մաթեմատիկական գիտական դպրոցի հիմնադիրը: Նրա ջանքերի շնորհիվ մաթեմատիկան Հայաստանում բարձրացավ միջազգային մակարդակի:

Հիմնական աշխատանքները նվիրված են կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսությանը:

Ա. Լ. Շահինյանի նախաձեռնությամբ 1945 թ. ՀՀ ԳԱԱ-ում հիմնադրվել է Մաթեմատիկայի և մեխանիկայի բաժանմունքը, հետագայում՝ ինստիտուտը, որի առաջին տնօրենն էր: 1950-1963 թթ. ՀՀ ԳԱԱ ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, նախագահության անդամ էր:

Երևանի պետական համալսարանում դասավանդել է 1929-78 թթ., հիմնադրել և մինչև կյանքի վերջը ղեկավարել է մաթ.անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնը, եղել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան:

Գիտական և գիտակազմակերպչական գործունեության մեջ ունեցած մեծ վաստակի համար պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի (կրկնակի), ժողովուրդների բարեկամության շքանշաններով:

Մեծահռչակ գիտնական, ուսուցչապետ, արժանավոր հայ և քաղաքացի, մեծ հայրենասեր, ազնվական մարդ, հայկական մաթեմատիկական գիտական դպրոցի հիմնադիր-ահա արժանիքների, առաքինությունների, անուրանալի վաստակի ոչ լրիվ թվարկումը, որոնք բնորոշում են ականավոր մաթեմատիկոս ակադեմիկոս Արտաշես Շահինյանին, որի ծննդյան 100-ամյակը շուքով նշվեց Գիտությունների ազգային ակադեմիայում: Հանդիսությունը մեծահամբավ գիտնականի, ճշմարիտ մտավորականի և մարդու հայրենական գիտությանը բերած վիթխարի ավանդի ու գնահատականի փորձ էր, երախտիքի տուրք Արտաշես Շահինյանի պայծառ հիշատակին: Հանդիսությունը բացեց ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Արտաշես Շահինյանի կյանքի փառավոր և արգասավոր ուղու մասին պատմեց ակադեմիկոս Նորայր Առաքելյանը (տե՛ս 2-րդ էջում):

Նշանավոր գիտնականի մասին հուշերով հանդես եկան ԳԱԱ ակադեմիկոսներ Ալեքսանդր Թալալյանը, Հանրի Ներսիսյանը, Նազարեթ Թովմասյանը, Գևորգ Բրուտյանը, Հրաչիկ Սիմոնյանը, դոցենտ Տոնոյանը, պրոֆեսորներ Լյուդվիգ Ղարիբջանյանը, Պարույր Մուրադյանը, ԳԱԱ թղթակից անդամ Գառնիկ Անանյանը:

Շնորհակալության խոսք ասաց Արտաշես Շահինյանի որդին՝ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Շահինյանը: Նա ներկաների ուշադրությանը ներկայացրեց Արտաշես Շահինյանի կյանքի ակնթարթները հավերժացրած տպավորիչ լուսանկարների մի ամբողջ շարք, Արտաշես Շահինյանի 60-ամյա հոբելյանի ժամանակ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանի ողջույնը և հոբելյարի՝ Արտաշես Շահինյանի, շնորհակալական խոսքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Արտաշես Լիպարիտի Շահինյանը հայ մտավորականների այն սերնդից է, որոնց հիմնարար գործունեության շնորհիվ հայ մտավոր ներուժը բարձրացավ միջազգային մակարդակի՝ համաշխարհային ճանաչում բերելով ժամանակակից հայկական գիտությանը:

Արտաշես Շահինյանի հիմնական վաստակը նրա մեծ ավանդն է հայրենի գիտության և բարձրագույն կրթության զարգացման մեջ, որը նա իրականացրեց՝ դառնալով մաթեմատիկայի ժամանակակից ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների սկզբնավորողը Հայաստանում:

Ա. Շահինյանի գիտական և քաղաքացիական սխրանքն այն էր, որ գիտական ավանդույթներ չունեցող մեր հանրապետությունում հիմնադրեց և զարգացրեց հայկական մաթեմատիկական գիտական դպրոցը:

Արտաշես Շահինյանը ծնվել է 1906 թ. դեկտեմբերի 19-ին Գյումրի (Լենինական) քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստանալով Երևանի ինդուստրիալ տեխնիկումում՝ նա ընդունվում և 1930 թվականին ավարտում է Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը: 1929 թվականից, դեռ ուսանողական տարիներից, նա դասախոսական աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում: 1934 թվականին ընդունվում է Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրան, ուր ուսանում է ռուս ականավոր մաթեմատիկոս, ակադեմիկոս Վ. Ի. Սմիռնովի մոտ: Արդեն այդ տարիներին ի հայտ է գալիս Ա. Շահինյանի վառ գիտական տաղանդը. նա ստանում է իր առաջին ինքնատիպ գիտական արդյունքները օրթոգոնալ բազմանդամների տեսության և կոմպլեքս տիրույթում մոտավորությունների տեսության մեջ:

Վերադառնալով Հայաստան՝ նա սկսում է իր ակտիվ գիտամանկավարժական գործունեությունը Երևանի պետական համալսարանում: Առաջին անգամ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում նա սկսեց կարդալ մաթեմատիկական անալիզի և կոմպլեքս ֆունկցիաների տեսության հիմնական դասընթացները: Բացի այդ՝ նրա կողմից առաջին անգամ համալսարանի ուսումնական ծրագրերի մեջ մտցվեցին իրական փոփոխականների ֆունկցիաների տեսության, կոմպլեքս և իրական տիրույթներում մոտավորությունների տեսության դասընթացները և ֆունկցիաների տեսությունից մի շարք հատուկ դասընթացներ: Ա. Շահինյանի ղեկավարությամբ սկսեց գործել գիտական սեմինար:

Այսպիսով՝ նա առաջինն էր, որ Հայաստանում ժամանակակից գիտական մակարդակով սկսեց կարդալ ընդհանուր և հատուկ դասընթացներ՝ բարձրագույն մաթեմատիկայի շատ բաժիններից:

Այստեղ պետք է նշել, որ այն ժամանակ Հայաստանում չկային որակյալ մաթեմատիկոսներ և անհրաժեշտ գիտական միջավայր՝ մաթեմատիկայի գծով լուրջ գիտահետազոտական աշխատանք կատարելու համար:

Այդ բանին մեծապես նպաստեց նաև Ա. Շահինյանի անձնական ստեղծագործական ակտիվությունը, որն իր գագաթնակետին հասավ 40-50-ական թվականներին, ինչպես նաև նրա՝ մանկավարժի և դաստիարակի մեծ վարպետությունը: Յուրաքանչյուրը, ում բախտ է վիճակվել ունկնդրել նրա փայլուն դասախոսությունները, հիշում է, թէ ինչպիսի հմտությամբ էր նրան հաջողվում գրավիչ և մատչելի ներկայացնել մաթեմատիկական բարդ խնդիրներն ու գաղափարները: Նրա հափշտակվածությունը գիտությամբ, ստեղծագործական ներուժը և սերը դեպի երիտասարդությունը թույլ տվեցին, որ նրա շուրջ հավաքվեն օժտված ուսանողներն ու ասպիրանտները: Շփումները, անհատական պարապմունքները, զրույցները համատեղ զբոսանքների ժամանակ օգնում էին երիտասարդներին՝ ներգրավվելու ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի մեջ:

Պատերազմական այդ տարիներին Կելդիշը և Լավրենտևը զբաղված էին երկրի պաշտպանության հետ

Ձախից աջ, ակադեմիկոսներ՝ Ս. Ն. Մերգելյանը, Ա. Լ. Շահինյանը, Ի. Ն. Վեկուան (Նովոսիբիրսկի պետական համալսարանի ռեկտոր, հետագայում՝ Վրաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ), 1958թ.

կապված խնդիրներով, իսկ Սմիռնովը գտնվում էր էվակուացիայի մեջ և, փաստորեն, Շահինյանին էր վիճակվել դառնալ այդ բնագավառի առաջատարը: Եվ ի պատիվ նրա՝ պետք է ասել, որ նա արժանապատվորեն կատարեց այն:

Մեր դարաշրջանի ականավոր մաթեմատիկոսները, ի դեմս ակադեմիկոս Մ. Կելդիշի և ուրիշների, իրենց հետազոտություններում էապես օգտագործել են Ա. Շահինյանի մշակումները:

Ռուս ակադեմիկոսներ Վ. Սմիրոնովի, Մ. Լավրենտևի և Մ. Կելդիշի հետ միասին՝ Ա.Շահինյանը մոտավորությունների տեսության հիմնադիրներից է:

Մեծ է նաև Ա. Շահինյանի գիտակազմակերպչական վաստակը: 1945 թվականի փետրվարին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումից ոչ շատ անց, դեռևս շարունակվող պատերազմի պայմաններում, նրա անձնական նախաձեռնությամբ և ջանքերով ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորը: Հետագայում այն վերածեց մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի, որի հիմնադիրն ու բազմամյա տնօրենն էր Ա. Շահինյանը: Ա. Շահինյանի աշակերտներից շատերը հետագայում դարձան ճանաչված գիտնականներ, գլխավորեցին գիտական նոր ուղղություններ: Դրանցից առաջին հերթին անհրաժեշտ է հիշատակել ակադեմիկոսներ Ս. Մերգելյանին և Մ. Ջրբաշյանին, որոնց գիտական նվաճումները մեծ ճանաչում ստացան մեր երկրում և նրա սահմաններից դուրս:

Ակադեմիկոս Նորայր Առաքելյան

«Գիտության աշխարհում» հանդես

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԸ ԿՈԽԿՈՏՎԱԾ Է»

(Սկիզբը՝ նախորդ համարում)

- Ուզում եմ խոսել մեր մշակումներից ևս մեկի մասին: Այսօր, երբ հսկայական ուշադրություն է նվիրվում գյուղատնտեսության ինտենսիվացմանը, վճռական նշանակություն է ստանում պարարտանյութերի կիրառումը: Մենք մշակել ենք հողը պարարտացնելու «Նիտրագին» բակտերիալ նյութը: Այն էկոլոգիապես մաքուր է, փորձարկվել է Հայաստանի և Ռուսաստանի մոտ 50 շրջաններում, պաշտպանված է ռուսական հեղինակային 3 վկայականով: Ներկայումս այն փորձարկվում է նաև Ֆրանսիայի հարավում՝ ռապսայի պլանտացիաներում: Մենք դիմել ենք հեղինակային արտոնագիր ստանալու նաև Ֆրանսիայում:

Մենք առաջարկում ենք բակտերիալ նիտրագինի սկզբունքորեն նոր խառնուրդ ցեոլիտի հետ, որի պաշարները Հայաստանում գործնականում անսպառ են: Ցեոլիտը պահպանում խոնավությունը, հողի կառուցվածքը, լավացնում է աէրացիան և միաժամանակ բույսերը պաշտպանում հիվանդություններից: Այն նպաստում է նաև բերքատվության բարձրացմանը: Հողի պարարտացման համար մեկ հեկտարի համար ծախսվում է 50 գրամ նիտրագին: Այս պարարտանյութի օգտագործումը թույլ կտա հրաժարվել սելիտրայից, որը Եվրոպայում արել են 7-8 տարի առաջ:

- Պարոն Հակոբյան, իսկ ինչպե՞ս են նիտրագինին վերաբերվել Հայաստանի Գյուղատնտեսության նախարարությունում:

- Լավ: Երկար բանակցություններից հետո նախարարությունը մեզ տրամադրեց երկու դրամաշնորհ՝ Արարատի և Վայոց Ձորի մարզերում նիտրագինը փորձարկելու համար: Այն բանից հետո, երբ մենք նիտրագինը փորձարկեցինք Մարալիկում, աշնանացանի դաշտերում, բազմաթիվ ֆերմերներից հայտեր ստացանք իրենց վաճառել այդ պարարտանյութը: Սակայն նորից կրկնեմ, որ մենք առևտրային կազմակերպություն չենք, և, բացի այդ, նիտրագինը արտադրելու մեր հնարավորությունները շատ սահմանափակ են: Դժբախտաբար, այն մարդիկ, որոնք խոշոր միջոցներ ունեն, հետաքրքրություն չցուցաբերեցին այդ պարարտանյութի արտադրության նկատմամբ: Հավանաբար նրանց համար ավելի ձեռնտու է սիգարետ կամ սելիտրա բերել և վերավաճառել, որովհետև օգուտները ստանում են անմիջապես: Իսկ նիտրագինի արտադրությունը կազմակերպելով, նրանք մեկ-երկու տարի պիտի սպասեն շահույթ ստանալու համար: Նորից եմ կրկնում, այս հարցերը պետք է կարգավորի պետությունը:

- Դուք պատմեցինք ձեր ունեցած գիտական մշակումների մասին: Իսկ ինչպիսի՞ն է վիճակն այսօր: Ինստիտուտը հնարավորություններ ունի՞ իրականացնելու գիտական հիմնարար հետազոտությունները:

- Մեզ մոտ աշխատանքներ են տարվում հանքերի թափոններից ծանր մետաղների, այդ թվում նաև ազնիվ մետաղների կորզման եղանակների մշակման ուղղությամբ: Այս աշխատանքը դեռևս չի հասցվել կոմերցիոն առաջարկության մակարդակի, սակայն արդեն հիմա կարող ենք ասել, որ մեր մեթոդը կլինի ավելի էժան և արդյունավետ: Երկրորդ հեռանկարային աշխատանքը կապված է միկրոբիալ գաղութների ստացմանը, որոնք ընդունակ են տիղմի միջից կլանել հիվանդածին բաղադրիչները և մասնավորապես ծանր մետաղները:

Մեր ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններն են միկրոբիոլոգիան, կենսատեխնոլոգիաները և կիրառական մշակումները, որոնք մենք իրականացնում ենք մեր հնարավորությունների շրջանակներում: Մեր պայմաններում կատարել խոշոր հիմնարար հետազոտություններ՝ անհնարին է: Մենք հետ ենք մնացել: Շատ բաներ կատարելու ձևերը մենք գիտենք, սակայն չենք կարող: Ամբողջ աշխարհում միկրոբիոլոգիական գիտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բակտերիայի բջջի մակարդակի գենային ինժեներիա: Ես գենային ինժեներիայի բնագավառի մասնագետ եմ, սակայն ոչինչ չեմ կարող անել: Միկրոբիոլոգիայում գենային ինժեներիայի մեթոդների և գաղափարախոսության կիրառման համար անհրաժեշտ են մի շարք ոչ այնքան սարքավորումներ, որքան շատ թանկարժեք կոմպոնենտներ (բաղադրիչներ): Օրինակ, ֆերմենտի (գենը որոշող) 1000 միավորը արժե 10.000 դոլար: Իսկ մեզ միայն մի տեսակ ֆերմենտ չի պետք, այլ՝ 30 և ոչ թե 1000 միավոր, այլ՝ 10.000: Խնդրում եմ հաշվեցեք: Մեր ժամանակներում միկրոբիոլոգիան չափազանց թանկ զբաղմունք է: Կենսատեխնոլոգիաները զարգացնելու հնարավորություն ունեն միայն ապահովված երկրները:

- Այլ խոսքով, ձեր բնագավառում, ինչպես և ամենուր, ամեն ինչ հանգում է ֆինանսավորմանը:

- Ոչ միայն ֆինանսավորմանը: Չէ՞ որ մեր բնագավառում ֆինանսավորման անհրաժեշտության ըմբռնումը, գիտակցումը՝ նույնպես շատ կարևոր է: Ըստ որում, ես կարծում եմ, որ այդ միջոցները պիտի գան ոչ այնքան բյուջեից, որքան մասնավոր սեկտորից՝ օլիգարխներից, որոնք կենսատեխնոլոգիական արտադրության նյութերից կարող են ավելի մեծ շահույթներ ստանալ, քան նավթի առևտրից: Սակայն հիշածս անձինք չեն մտածում ֆինանսավորել կենսատեխնոլոգիական արտադրության զարգացումը: Ես հանդիպել և զրուցել եմ բազմաթիվ օլիգարխների հետ: Նրանցից ոչ մեկը չի ասել՝ «ոչ», սակայն նրանցից ոչ մեկը չի ասել նաև «այո»: Այսպիսին է իրադրությունը այսօր և չեմ կարծում, թե մոտ ժամանակներում՝ այն կփոխվի դեպի լավը:

- Ներդրումային այս պրոբլեմը կարո՞ղ է արդյոք լուծվել վենտուրային համակարգի միջոցով, որի ստեղծման մասին այսօր այդքան խոսվում է:

- Կարծում եմ՝ այո: Ես այդ մասին գրել եմ անգամ ՀՀ ԳԱԱ նոր պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանին: Բացի այդ, ես առաջարկել եմ (Ռուսաստանի Դաշնության ԳԱ-ի նմանությամբ) ստեղծել հիմնարար հետազոտությունների հայկական հիմնադրամ, որը կարող է դառնալ վենտուրային հիմնադրամների նախա-

«ԱՇԽԱՐՀԻ ՖՈԼԿԼՈՐ» ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



Armenia // "The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife." William M. Clements, ed. (4 volumes). Volume 2: Southeast Asia and India, Central and East Asia, Middle East. Westport (Connecticut), London, 2006, pp. 357-372.

«Համաշխարհային ֆոլկլորի և ժողովրդական կենցաղի» քառահատոր հանրագիտարանը լույս է տեսել 2006 թ. ԱՄՆ-ում Գրինվուդ հրատարակչության կողմից (գլխավոր խմբագիր՝ Պրոֆ. Ուիլյամ Քլեմենթս):

Տակավին 1997 թ. լույս էր տեսել նմանատիպ երկհատոր մի հանրագիտարան, որտեղ Հայաստանը չէր ներկայացված:

Այս նոր քառահատորյակի I-ին հատորը սկսվում է գիտական ուսումնասիրությամբ, որտեղ տրված են ֆոլկլորի ընդհանուր բնութագիրը, ժանրերն ու թեմաները, ինչպես նաև ներկայացված են Աֆրիկայի, Ավստրալիայի և Օվկիանիայի երկրների ֆոլկլորի մասին հոդվածներ:

II-րդ հատորը նվիրված է Հարավ-Արևելյան Ասիային և Հնդկաստանին, Կենտրոնական Ասիային և Մերձավոր ու Միջին Արևելքին, ընդ որում՝ հոդվածներ Հայաստանի, Իսրայելի, քրդերի, Լիբանանի, Պաղեստինի, Պարսկաստանի, Եմենի և Թուրքիայի ֆոլկլորների մասին:

III-րդ հատորը նվիրված է Եվրոպային, իսկ IV-րդը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներին:

Թեպետ յուրաքանչյուր երկրի համար սահմանված էր հատկացնել 9 էջ, սակայն Հայաստանին, որպես հնագույն և հարուստ մշակույթ ունեցող երկիր, հատկացվել է 15 էջ:

II հատորի Մերձավոր ու Միջին Արևելք բաժինը բացվում է «Հայաստան» հոդվածով, որի հեղինակն է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանը: Նա իր հոդվածն սկսում է հետևյալ բնորոշմամբ. «Հայկական մշակույթի արմատները ժամանակակից են շումերաբաբելոնյան և եգիպտական քաղաքակրթություններին, հետևաբար Հայաստանը ևս քաղաքակրթության օրրան է»: Հայկական բարձրավանդակի վերաբերյալ պատմական առաջին տեղեկությունը հանդիպում է մ.թ.ա. 28-րդ դարում, շումերական արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում է Արարատ պետությունը՝ Արատտա ձևով:

Հայ ժողովրդի բանահյուսությունը ներկայացված է պատմական հենքի վրա՝ սկսած պատմահայր Մովսես Խորենացու և այլ պատմիչների հաղորդած բանահյուսական նշխարներից («Հայկ և Բել», «Հայկյան Արամ», «Երվանդյաններ», «Արտաշես և Սաթենիկ», «Տիգրան Մեծ», «Գրիգոր Լուսավորիչ և Տրդատ», «Արշակ և Շապուհ»), այնուհետև՝ «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսն իր չորս ճյուղերով, Բագրատունյաց, ապա՝ Ռուբինյաց թագավորությունները, և այդ ընթացքում հյուսված ժողովրդական բանավոր ստեղծագործությունները (առակներ, առած-ասացվածքներ, օրհնանքներ, անեծքներ, աղոթքներ և այլն), տարաբնույթ երգերը (օրորոցայիններ, սիրային, աշխատանքային, կենցաղային, տոնական-ծիսական, հարսանեկան, պանդխտության, թաղման և այլն): Հոդվածում ներկայացված են նաև հերոսամարտերին նվիրված պատմական բնույթի երգերը, որոնք հյուսվել են պատմական դեմքերի (Լորիս Մելիքով, Անդրանիկ Զորավար և այլ հերոսներ) և պատմական իրադարձությունների շուրջ՝ ընդգրկելով վկայություններ Հայոց ցեղասպանության, ջարդի ու կոտորածի, դերզորյան երգերի, ականատես վերապրողների պատմած հուշերի մասին, որոնք ևս բանահյուսական և պատմափաստագրական արժեք ներկայացնող սկզբնաղբյուրային նյութեր են և ժանրեր:

Հոդվածում նշված է նաև, որ թուրքական կառավարության կազմակերպած Հայոց ցեղասպանության ընթացքում (1915-1923 թթ.) հայ ժողովուրդը 1,5 միլիոնից ավելի զոհ է տվել, իսկ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը երբեմնի Պատմական Հայաստանի միայն 1/10 մասն է կազմում:

Հանրագիտարանային այս հոդվածն օժտված է լուսանկարներով, որոնք գաղափար են տալիս հայ ժողովրդի ճարտարարվեստի, մանրանկարչության, ազգային տարազների և կյանք ու կենցաղի մասին, ինչպես նաև՝ հայագիտական հարուստ մատենագիտությամբ:

Վ. Սվազլյանի անգլերեն ընդգրկուն այս հոդվածը ծանրակշիռ ներդրում է հայ ժողովրդի բանահյուսությունը և կենցաղը հեղինակավոր հանրագիտարանի միջոցով առաջին անգամ աշխարհին ներկայացնելու առումով:

Սվետլանա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

կարապետը: Իմ կարծիքով, սա մասնավոր կապիտալը գիտություն բերելու հարմար միջոց է:

- Իսկ կարո՞ղ է արդյոք ստեղծված այս վիճակը փոխել գիտության բարեփոխումների իրականացվող ծրագիրը:

- Այո՛, կարող է, միայն թե վատթարացման առումով: Ես մոտավորապես գիտեմ, թե ինչ է ծրագրվում անել, և կարծում եմ, որ մենք դեռ պատրաստ չենք նման բարեփոխումների: Բարեփոխումները հրամանով չի կարելի իրականացնել, այն պետք է հասունանա: Ես երկու ձեռքով կողմ եմ գիտության վերակառուցմանը, սակայն դրան պետք է լրջորեն նախապատրաստվել: Ես կողմ եմ, որ փոխվեն 65 տարին լրացրած տնօրենները, սակայն ակադեմիական ինստիտուտների համար որտեղի՞ց պետք է գտնել 30 երիտասարդ տնօրեններ: Եկեք նախ դրանց պատրաստենք, իսկ հներին էլ պահենք որպես խորհրդականներ:

Բացի այդ շատ ինստիտուտներում պետք է կրճատումներ կատարել և ազատվել գիտության բաղադրիչ դարձած ավելորդ բեռից (բալաստից): Պետք է ուժեղացնել հսկողությունը հատկացված գումարների նպատակային օգտագործման նկատմամբ: Եվ, ամենագլխավորը, լուծել գիտական կադրերի պատրաստման հարցը: Այսօր ավագ սերունդը հեռանում է, միջին սերունդ որպես այդպիսին չկա, իսկ այն երիտասարդները, որ այսօր գալիս են գիտություն պարզապես անգրագետ են և ոչ զարգացած: Գիտության վարկը կոխկռտված է: Այսօր գիտնական լինելը մեծ շնորհ չէ, պատվաբեր չէ, որովհետև գիտնականին շատ քիչ են վճարում, հասարակության մեջ նա աննշմարելի է, աննկատ և ոչ մեկին պետք չէ: Այս բոլոր հարցերը լուծելու համար ժամանակ է պետք՝ լրջորեն խորհրդածելու և կշռադատելու:

Պրոֆեսոր Ժան Հակոբյանի հետ զրուցեց
Յուլիա ԿՈՒԼԵՇՈՎԱ.Ն
«Դելովոյ էքսպրես»,
օգոստոս, N 31

ԼԵԶՈՒՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է

Մայրենի լեզուն այս տարվանից իբրև տոն նշվեց նաև Հայաստանում: Այն մեր տոնացույցի պետական տոներից է այլևս: Շատ ուրախ եմ, որ աշխարհով մեկ նշվում է մայրենիի տոնը, չէ՞ որ մենք էլ աշխարհի մի մասն ենք: Մեր լեզուն մեր ճակատագիրն է կրում և շատ է տառապել ու արհամարհվել: Այս տոնը մայրենի լեզվի արժևորման, լեզվի նշանակությունը շեշտելու առումով կարևոր է: Թշնամիներ այսօր էլ շատ ունենք, մեր լեզվին հարվածել են ձախից, աջից: Ես դրսում եմ ապրել և տեսել եմ հայերենի վիճակը դրսում: Էլ չեմ խոսում այն մասին, որ ներսում ևս մեր վերաբերմունքը լեզվի նկատմամբ սարսափելի է եղել: Չենք սիրել, չենք հարգել մեր լեզուն: Հայերենը մեծ հնարավորություններ ունի, ազնվական լեզու է: Երբ թարգմանում են մեր գործերը, աղքատանում են նրանք, ռուսերենը չի կարողանում դիմանալ մեր լեզվի հնարավորություններին: Այսօր Ռուսաստանում խայտառակ ռուսերենով են խոսում: Ինձ թվում է հայերենի նկատմամբ աղմուկը իզուր է, որովհետև ամեն ինչ համեմատության մեջ պիտի դիտարկել: Ես համեմատում եմ 1945թ. Երևանի փողոցի լեզուն այսօրվա փողոցի լեզվի հետ: Մար ու ծորի տարբերություն կա: Այսօր փողոցում խոսում են շատ լավ հայերենով: Մենք մաքսիմալիստ ենք, ուզում ենք փողոցում խոսեն գրական լեզվով: Չէ, եղբայր, բարբառ են օգտագործում, քաղաքային ֆոլկլոր, ժարգոն նաև, բայց տագնապելու հարկ չկա: Իհարկե, լավ է, թող ասեն, թող ավելի մեծ լինի ուշադրությունը լեզվի հանդեպ: Իսկ մեր հեռուստատեսության լեզուն լուրջ սրբագրումների կարիք ունի: Այն ուսուցողական պիտի լինի, ամեն ինչից զատ, դպրոց է, դաստիարակում է: Իսկ Աժ-ում ուզում են հայերեն խոսել, այդ ցանկությունը կա, պատգամավորները մեկ մեկ բառեր են օգտագործում, ասել կուզեն մենք էլ գիտենք հնամենի այդ բառերը: Երևանում ամեն քայլափոխի կարելի է հանդիպել գովազդների ու ցուցանակների, որտեղ հայերենը կամ բացակա է, կամ ստորադասված է: Դա մեր օտարամոլության հետևանքն է: Կամ երբեմն ռեստորանի, առևտրի օբյեկտի անունների ենք հանդիպում, որոնցից օտարամոլության հետ գավառամտություն է բուրում: «Վալենսիա», «Մանհեթեն», «Լաս Վեգաս», «Մուլեն Ռուժ» այս անուններն իրոք գավառամտության արտահայտություն են: Այսինքն մեր մեջ ընդօրինակելու մարմաջ կա: Ոչ միայն գովազդներն ու ցուցանակներն են այդ մասին վկայում, մեր կենցաղն էլ ենք ընդօրինակում: Այսինքն դեռ թույլ ենք, դեռ չենք կարող մեզ ներկայացնել: Մենք չունենք պետական մշակույթ: Չունենք կուլտուրա ասվածը: Տեսեք մեր հագուստի մեջ էլ հայկական ոչինչ չկա: Այս առումով էլ գուցե հետամնաց ենք, բայց այս հարցերը լուծելի են: Այսօր ավելի Գլոբալ հարցեր ունենք տարածքների, Ղարաբաղի, պետականության հարցերը, որոնք պիտի լուծվեն: Կամ գազի, ճանապարհների հարց ունենք, որոնք առավել առաջնահերթ են: Մշակույթը, թատրոնը, կինոն առանց գազի և ճանապարհների գոյություն ունենալ չեն կարող: Մշակույթը պետական մշակույթի բաղադրիչն է: Պիտի պետություն ունենանք, որ մնացածը ունենանք: Մենք այսօր խնդիրներ ունենք լուծելու, առաջին անգամ պատմության մեջ այս խնդիրները լուծել է պետք:

Մեկ այլ կարևոր խնդրի մասին կուզեի խոսենք: Խոսքը դասական ուղղագրությանն անցնելու մասին է: Մարդիկ, ովքեր պետության ջատագովներ են և միշտ խոսում են պետության մասին, հակառակ բան չպիտի ասեն: Կա ժամանակի հասկացություն, մենք հիմա հո չե՞նք վերադառնա գրաբարին: Խնդրեմ, մերոնք հրատարակել են Նարեկացի, ավելի ճիշտ ընդօրինակել են, ու ես չեմ կարող կարդալ: Գրաբար է և ձեռագիր, բայց անընթեռնելի: Այդպես ժամանակին կարդացել են: Հիմա չի կարդացվում: ...Պետություն ասելով նկատի ունեմ այսօրվա մեր վիճակը: Մեր լեզուն, որ ճանապարհ է անցել: Աբովյանի երևույթը պատահական չէր: Աբովյանից հետո Ռաֆֆին մշակեց լեզուն, Շիրվանզադեն եկավ, մարդիկ, ովքեր, եթե անգամ գրական արժեքներ էլ չստեղծեին, լեզուն էին մշակում: Ստեղծեցին գրական հայերեն: Մեր լեզուն այսօր հնարավորություն ունի կուլ տալու, կլանելու, հարստացնելու գրական հայերենը: Մեր լեզուն ողնաշարն է: Գրաբարյան բառեր մտան, չէ՞, լեզվի մեջ: Այսօր «քանզի» ու «զի» են ասում, «արդ» և «ահավասիկ»: 50 տարի առաջ «քանզի» բառը չկար, «որովհետև» էինք ասում միայն: Մեր լեզուն, մեր այսօրվա հայերենն իր ուղղագրությամբ պետություն է, մեր հիմքն է սա, և այս հիմքի վրա պիտի արվեն մնացած ամեն բաները: Դեմ չեմ գրաբարյան հայերենին, այն աստվածային լեզու է, մեր ազնվականության արտահայտությունը, որը կորցրինք: Իսկ ուղղագրության մասին Լևոն Հախվերդյանը ճիշտ էր ասում մենք անգրագետ կդառնանք: Ի՞նչ վատ է մեր ուղղագրությունը: Սրանք ֆոկուսներ են: Մենք հասկանում ենք արևմտահայերենը, արևմտահայերը կարդում և հասկանում են արևելահայ գրական լեզուն: Սփյուռքում այսօր Հայաստանից գնացած հայերն են, իսկ սփյուռքահայերից քչերն են մնացել: Երկու միլիոն հայություն որտեղի՞ց Սփյուռքում:

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

Տիգրան Պետրոսյան. դպրոցական տարիներ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ. ավարտել է Թբիլիսիի Ավ. Իսահակյանի անվան N 5 միջնակարգ արական դպրոցը: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: Զբաղվում է նաև գեղանկարչությամբ: Համաամերիկյան գեղանկարչական ցուցահանդեսների մրցանակակիր է: Այժմ ապրում է Դալլասում (Պլենո): Այս հուշագրությունը սիրով տրամադրել է «Գիտություն» թերթին, որից մի հատված ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

Ես վաղուց էի մտահղացել գրել այս հիշողությունները: Տիգրան Պետրոսյանի, և հատկապես նրա շախմատային գործունեության լուսաբանմանը նվիրված շատ աշխատություններ կան, կան նաև նրա կյանքին և կենսագրությանը նվիրված գրքեր: Սակայն, ըստ իս, նրա պատանեկության շրջանը այնքան էլ լուսաբանված չէ:

Ես չեմ փորձել այս հիշողություններով կենսագրության այդ հատվածը ներկայացնել, ավելի ճիշտ՝ նպատակ չեմ հետապնդել կենսագրության դրվագները, հիշողությունները շարադրել տարիների և օրերի թվային փաստերի առումով: Ուղղակի նպատակ եմ ունեցել վերարտադրել այն, որոնք ապրել եմ դպրոցական տարիներին, և՛ ժամանակի առումով, և՛ այդ ժամանակի և հեռավորության զգացմունքների կրկնությամբ: Չեմ փորձել վերանայել դրանք, ելնելով այսօրվա իմ ընկալումներից և զգացմունքների տարիքային տարբերությունից, քանզի դրանով ավելի աղավաղված կլինի այն մթնոլորտը, որում ապրել և ձևավորվել էինք՝ որպես անհատներ և որպես սերունդ, հատկապես, որ Տիգրան Պետրոսյանը իբրև անհատականություն հարազատ էր այդ սերունդին և մնաց այդպիսին ամբողջ իր կյանքում:

Ես հպարտ եմ, որ ճանաչել եմ այդ հանճարեղ, պարզ, բարի և մեծ մարդուն, ընկեր եմ եղել նրան, կիսել եմ նրա հետ դառնության և ուրախության ժամեր և վայրկյաններ...

Հանդիպում

1942 թվի դպրոցական շրջանը մեզ համար սկսվեց բազմաթիվ նորություններով: Պատերազմի երկրորդ տարին էր: Մեր հարազատներից ու բարեկամներից շատերը ռազմաճակատում էին: Թիֆլիսում նույնպես ծանր վիճակ էր: Ստեղծվել էին առանձին արական և իգական դպրոցներ: Մեր նոր դպրոցը գտնվում էր քաղաքի հրապարակից դեպի «Սոլոլակ» թաղամաս տանող փողոցներից մեկի վրա: Այստեղ էին տեղափոխվել նաև հայկական այլ դպրոցների տղաները: Դա նախկին Մանթաշևյան Առևտրական դպրոցի շենքն էր, որի ճակատին փորագրված տառերի ուրվագծերը պարզ կարդացվում էին նույնիսկ բավականին հեռվից: Մեզ ասացին, որ այստեղ մենք ժամանակավոր ենք: Մեզ համար պատրաստվում է նոր շենք, ուր մենք կտեղափոխվենք մի քիչ ուշ:

Մեր դասերը սկսվում էին ուշ՝ ժամը 3-ին, ռուսական դպրոցի դասերը ավարտվելուց հետո, և վերջանում էին երեկոյան 9-ին: Մինչև 3-ը ոչ բոլորն էին զբաղված օգտակար զբաղմունքով: Սակայն մենք, ի տարբերություն շատ-շատերի, հաճախում էինք Թիֆլիսի Պիոներ պալատը, որին մենք անդամագրվել էինք ամբողջ մեր բակի տղաներով, դեռ պատերազմից առաջ: Դպրոցում հետզհետե վիճակը նորմալանում էր: Մի քանի ամիս հետո մենք, վերջապես, տեղափոխվեցինք մեր նոր դպրոցի շենքը: Դա քառահարկ հին, բայց լավ վերանորոգված և դպրոցին հարմարեցված շենք էր: Նա գտնվում էր Մանթաշևյան շենքից մի երկու կանգառ վերև Սոլոլակի թաղամասի հրապարակի վրա, կամ ավելի ճիշտ՝ Էնգելսի և Լերմոնտովի փողոցների խաչմերուկում, որը նման էր հրապարակի: Այդ թաղամասը հին հայկական թաղամաս էր, որտեղ ապրել և ապրում էին շատ հայ մտավորականներ՝ գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, մանկավարժներ: Մեր այդ նոր դպրոցից քիչ վերև Հովհաննես Թումանյանի տունն էր, որտեղ դեռ ապրում էին նրա ընտանիքի անդամները, Արմեն Տիգրանյանի տունը, Հովհաննես Թումանյանի տան հարևանությամբ, փողոցի մյուս կողմում: Այս թաղամասում էին ապրում Ներսիսյան ճեմարանն ավարտած մեր ուսուցիչներից շատերը: Մեր դպրոցին շնորհվեց Ավետիք Իսահակյանի անունը...

...Նոր շենք տեղափոխվելուց մի քանի ամիս հետո մեր դասարանի մատյանում գրանցվեց ևս մեկ ազգանուն՝ Տիգրան Պետրոսյան: Երկար ժամանակ մենք նրան չէինք տեսնում դասարանում: Մեզ անծանոթ ազգանուն էր: Նա սովորել էր 12-րդ դպրոցում: Նրա դպրոցի նախկին դասարանցիները շատ մեծ հարգանքով էին խոսում նրա մասին: Վերջապես, մի օր Տիգրանը եկավ դպրոց: Մանկավարժական կազմը (ոչ բոլորը), ինչպես նաև նրա նախկին դասընկերները, անսովոր աշխուժության մեջ էին: Նրան շրջապատել էին և երկար ժամանակ նրան բաց չէին թողնում, տարբեր հարցեր էին տալիս: Նա բոլորին պատասխանում էր հանգիստ, կարճ, առանց մանրամասնությունների: Դասարան մտավ առանց ուշադրություն դարձնելու շրջապատին, իրեն հատկացված տեղը նստեց անխոս ու հանգիստ: Իմ վրա Տիգրանը այնպիսի ուժեղ տպավորություն թողեց, որ ես երկար ժամանակ չէի կարողանում ինքս ինձ բացատրել: Նա հյուծված էր, հիվանդոտ, երևում էր, որ ականջը բորբոքված է եղել ու դեռ շարունակվում է բուժվել: Իմ մոտ ակամայից հարց էր առաջանում, թե ինչո՞ւ և որտեղի՞ց այդքան ուշադրություն նրան ճանաչող ուսուցիչների և դպրոցականների կողմից: Հետո մեր ռուսաց լեզվի ուսուցիչը մեզ ակնածանքով ասաց, որ նա քաղաքում ճանաչված շատ լավ շախմատիստ է և ոչ միայն իր հասակակիցների մեջ: Մենք, կարծես, սկսում էինք հասկանալ: Այդ ժամանակ մենք դեռ շախմատ չէինք խաղում և շախմատային կյանքին ծանոթ չէինք, չնայած Պիոներ պալատում մեզ առաջարկվել էր շախմատային խմբակը՝ իբրև պարապմունքի խմբակ, բայց ես, մեր բակի տղաները և եղբայրներս նախընտրել էինք այլ խմբակներ: Առաջին օրերին Տիգրանը մեր դասարանում ոչ մեկի հետ չէր շփվում: Լուռ նստում էր դասի, իսկ դասամիջոցին կամ մնում էր նստած և ինչ-որ բան էր կարդում, կամ զրուցում էր իր նախկին ընկերների հետ, որոնք, ինչպես ես հասկանում էի, բավականին մտերիմ էին: Դասարանում Տիգրանը նստում էր աջ շարքի երկրորդ նստարանին: Իմ տեղը միջին շարքի երրորդ նստարանն էր: Ես տեսնում էի, թե ինչպես որոշ դասերի ընթացքում նա հանում էր փոքրիկ ծոցատետրը և ուշադիր սկսում էր ուսումնասիրել այնտեղ գրված ինչ-որ թվեր և տառեր: Նա անընդհատ մտածկոտ էր, լուրջ, անտրամադիր: Նրա վրա չէր ազդում դասարանցիների, դասի, դասամիջոցների աղմուկը: Սակայն հետաքրքրասիրությունը հաղթեց: Առաջին զրույցի նյութը հենց այդ ծոցատետրն էր: Իմ հարցին, թե՝ ի՞նչ է գրված այդ ծոցատետրում և ի՞նչ է կարդում նույնիսկ դասերի ժամին, նա վերջապես «բացվեց»: Մեծ ոգևորությամբ սկսեց բացատրել, որ դա պարզապես շախմատային խաղի ընթացքի արձանագրությունն է: Հիմնականում իր հետաձգված խաղերի գրառումն է, կամ այլ, արդեն կայացած մենամարտերի ընթացքն է: Առաջին դեպքում նա փնտրում է խաղի ճիշտ շարունակություն, իսկ երկրորդ դեպքում ուսումնասիրում է մեծ վարպետների խաղը՝ սովորելու նպատակով: Մենք շատ արագ ընկերացանք, հատկապես, երբ պարզվեց, որ մենք երկուսս էլ Պիոներ պալատի հաճախորդներ ենք: Պարզվեց, որ Տիգրանը ոչ միայն զրուցասեր է, այլ նաև պարզ և ընկերասեր անձնավորություն է, հումորի զգացումով և կատակասեր: Այնպես որ, նրան տխուր մարդ չէր կարելի համարել, ինչպես մենք կարծում էինք առաջին օրերին: Նա պիոներպալատ սկսել էր հաճախել այն ժամանակ, երբ պատահաբար տեսել էր այդ խմբակի սենյակը:

Շատ շուտով Տիգրանը դարձավ դասարանի սիրված տղաներից մեկը: Պարզվեց, որ նա երկար ժամանակ, մոր մահից հետո, հիվանդ էր եղել, երբ արդեն փոխադրվել էր վեցերորդ դասարան: Ընտանիքի խնամքը իր վրա էր վերցրել Տիգրանի հորաքույրը: Դա մի բարի, տարիքով կին էր: Մենք երկար ժամանակ կարծում էինք, թե նա Տիգրանի տատիկն է, որովհետև նրան «բաբո» էր ասում: Հիվանդության ընթացքում Տիգրանը թողել էր նաև շախմատը և նրա պատմությունը մեզ վրա ցնցող տպավորություն թողեց: Բայց կարճ ժամանակում Տիգրանը լրիվ կազդուրվեց: Նա դարձավ դասարանի սիրված և շատ լուրջ աշակերտներից մեկը: Ինչպես երևում էր նրա ակտիվ գործողություններից, և որոշակի կարծատև հարգելի բացակայություններից, վերականգնվել էր նաև շախմատային առօրյան:

Նա այդ ժամանակ ընդամենը 13 տարեկան էր, բայց շախմատի երկրորդ կարգի վարկանիշ ուներ: Այդ հասակում արդեն ուսումնասիրել էր շախմատային աշխարհի մեծերից շատերին՝ Լասկերին, Ալյոխինին, Էյվեին, Բոտվիննիկին, Կելչևսին, Նիմցովիչին, համարյա անգիր գիտեր Մայզելիսը և կարդացել էր շախմատային հսկայական գրականություն: Նա առիթը բաց չէր թողնում նրանց կյանքից մեզ պատմելու շատ հետաքրքիր դրվագներ: Մենք՝ դասարանի մի խումբ տղաներս, ակամայից սկսում էինք մտնել շախմատային պատմության հետաքրքրասերների մեջ: Տիգրանին արդեն ես հաճախակի հանդիպում էի Պիոներ պալատում, չնայած մենք պարապում էինք տարբեր խմբակներում:

Տիգրանը ապրում էր պիոներպալատից ոչ հեռու, նույն փողոցի վրա գտնվող Կարմիր բանակի, կամ Սպայի տան բակում: Նրանք մի փոքրիկ սենյակ էին զբաղեցնում երկրորդ հարկ բարձրացող աստիճանների տակ: Մեր ընտանիքը ապրում էր Ռուսթավելու պողոտայի մյուս ծայրին: Երևի դա էր պատճառը, որ մենք ամբողջ մեր ազատ ժամանակը անց էինք կացնում պիոներպալատում:

Պիոներպալատ

Թիֆլիսի պիոներպալատը բացվեց 1940 թվականի ամռանը, նախկին Ռուսաստանի՝ Կովկասի փոխարքա Վորոնցովի պալատի տարածքում: Դա մի հրաշալի, իսկական պալատներին հատուկ շինությունների համալիր էր՝ իր զբոսավայրերով, շատրվաններով, բազմաթիվ մեծ և փոքր դահլիճներով, հայելապատ պարասրահով, հատուկ կահավորված կինոդահլիճով և նույնիսկ փոքրիկ անտառակով: Մենք բակի տղաներով անմիջապես պիոներպալատի անդամներ դարձանք: Խմբակներ դեռ կազմակերպված չէին: Պիոներպալատը իր հիմնական աշխատանքին անցավ միայն 1941 թվականի սեպտեմբերից, երբ սկսվեցին դասերը: Մենք հաճախ էինք հիշում այդ օրերը: Տիգրանը անմիջապես ընտրել էր շախմատի խմբակը և ամբողջությամբ տարվել այդ խաղով: Նշեմ, որ բոլոր խմբակները ղեկավարում էին պրոֆեսիոնալ լավագույն մասնագետները: Շախմատի խմբակի ղեկավարը վարպետության թեկնածու Սորոկինն էր, որին փոխարինեց սպորտի վարպետ Արշիլ Էբրալիձեն, այն ժամանակվա շախմատի գծով Վրաստանի միակ սպորտի վարպետը: Ապա Էբրալիձեին փոխարինեցին վարպետության թեկնածուներ Բլագիձեն, ապա Գեորգաձեն և այլք...

Տիգրանի դպրոց գալուց հետո մեր դպրոցի, և հատկապես մեր դասարանի մի խումբ տղաներ նրա առաջնորդությամբ արդեն Պիոներ պալատի շախմատային խմբակի անդամներ էին: Շախմատը մեզ լիովին կլանեց: Մինչև դպրոցում դասերի սկսվելը, համարյա ամեն օր, մի քանի ժամ մենք պալատի շախմատային խմբակում էինք, որի ղեկավարը վարպետության թեկնածու Բլագիձեն էր: Նա փոխարինել էր Տիգրանի հիմնական ուսուցչին և խորհրդատուին՝ Արշիլ Էբրալիձեին, որի մասին Տիգրանը միշտ արտահայտվում էր խորը սիրով և հարգանքով: Երիտասարդ շախմատիստների հետ քաղաքային շախմատի ակումբում, որի անդամն էի նաև ես, պարապում էր փայլուն մանկավարժ Սորոկինը: Նա արդեն սպորտի վարպետ էր, երբ ես հաճախում էի քաղաքային ակումբ: Նա Տիգրանի առաջին ուսուցիչն էր: Բլագիձեն տարիքով շատ մեծ էր մեզանից, բայց Տիգրանին նա վերաբերվում էր ինչպես հավասարին, չնայած Տիգրանը միայն II կարգային շախմատիստ էր համարվում, իսկ Բլագիձեն արդեն վարպետության թեկնածու էր: Մենք՝ սկսնակներս, արդեն պատրաստվում էինք կարգի համար նախատեսված մրցումներին: Տիգրանը մեզ օգնում էր՝ հաճախակի ցուցադրելով իր և Բլագիձեի կայծակնային խաղերը: Տիգրանն արդեն գերազանցում էր իրենից բարձր կարգի վարկանիշ ունեցող շախմատիստներին: Մենք հետաքրքրությամբ հետևում էինք նրանց խաղերին և դա մտնում էր մեր պարապմունքների ծրագրի մեջ: Չնայած նրան, որ նա ամենակրտսեր երկրորդ կարգային էր, սակայն խաղում էր շատ վարժ ու համարյա միշտ հաղթում էր, հատկապես կայծակնային խաղերի ժամանակ:

Այն տարիներին շախմատային կյանքը Վրաստանում բավական ակտիվ էր: Կային բազմաթիվ բարձրակարգ վարպետներ՝ Էբրալիձե, Դավիթ Բրոնշտեյն, Բուսլաև, Սորոկին, Բլագիձե, Գիորգաձե... Նրանք շախմատը Թիֆլիսում դարձրել էին ամենատարածված սպորտային ձևերից մեկը: Եվ համարյա բոլորը, ովքեր պիոներպալատի շախմատային խմբակի անդամներ էին, դարձան Թիֆլիսի շախմատային ակումբի ակտիվ անդամներ: Շախմատային ակումբը աստիճանաբար վերածվեց շախմատիստների իսկական դարբնոցի: Մենք շարունակում էինք հաճախել թե՛ պիոներպալատի շախմատային խմբակը, և թե շախմատային ակումբ: Շախմատային ակումբում մեր ղեկավարը արդեն վարպետ Սորոկինն էր: Այնտեղ էր լինում նաև Տիգրանը, եթե քաղաքից չէր բացակայում: Շախմատային ակումբը իսկական մարզահրապարակ էր դառնում, երբ հավաքվում էին առաջատար շախմատիստներ: Մենք ականատես էինք լինում և՛ կայծակնային խաղերին, և՛ սովորական մարտերին, և՛ միաժամանակյա խաղի

➢ 7



ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ

(Սկիզբը նախորդ համարում)

Արցախը, որպես ինքնիշխան պետություն, ճանաչելու համար առկա են բոլոր նախադրյալները: Այդ կապակցությամբ կատարենք մի փոքր անդրադարձ:

1805 թվականից Արցախը մտնում է Ռուսական պետության կազմի մեջ: 1918-1920 թվականներին, շնորհիվ արցախահայության պայքարի, երկրամասում ստեղծվում է անկախ վարչաքաղաքական միավոր: 1920 թվականի մայիսի 12-ին 11-րդ կարմիր բանակը խորհրդայնացնում է նաև Արցախը: 1923 թվականի հուլիսին Ստալինի պնդմամբ պաշտոնապես կազմավորվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և բռնակցվում Ադրբեջանին:

Շուրջ 70 տարի Արցախն Ադրբեջանի կողմից ենթարկվում է բարոյական, քաղաքական և տնտեսական անասելի ճնշման, որի հետևանքով երկրում սկսվում է ակտիվ հայաթափություն:

1988 թվականի փետրվարի 20-ին Ստեփանակերտում արցախահայության հզոր ցույցից ծնունդ է առնում արցախահայության համազգային շարժումը, և 1991 թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանի խորհուրդների համատեղ նիստում ընդունվում է հռչակագիր ագատ, անկախ ԼՂՀ-ի ստեղծման վերաբերյալ, ինչը կատարվում է մինչ Ադրբեջանի միջազգային ճանաչման իրողությունը (1992 թ.):

Անհերքելի է, որ միության գոյության դադարեցումն ենթադրում է քաղաքական նպատակներով բռնակցված ժողովուրդների կամքի արտահայտության հնարավորություն, ինչ և արեց Արցախը՝ ինքնորոշվելով իր էթնիկական տարածքում, համահունչ միջազգային օրենքների և համապատասխան կանոնակարգերի, իսկ Ադրբեջանի հանրապետությունը հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից:

Այժմյան իրողությունն այն է, որ ԼՂՀ շուրջ 15 տարի կառուցում է իր ժողովրդադեմոկրատական երկիրը: Առկա են պետական համակարգի բոլոր բաղադրիչները, և գործում են ժողովրդադեմոկրատական հիմնադրույթներին համահունչ:

Արցախի տնտեսական զարգացումը բնութագրվում է տարեկան համախառն արտադրանքի 20% աճով, հարկային դաշտի մեղմ արտահայտությամբ, միջին և փոքր բիզնեսի արտոնյալ վարկավորմամբ և ներդրողների նկատմամբ առավելագույն պայմանների ստեղծմամբ: ԼՂՀ կառավարության 2006 թ. ծրագրի ուղղվածությունը բնութագրվում է՝

ա) տնտեսության զարգացում,

բ) սոցիալական խնդիրների լուծում,

գ) ժողովրդադեմոկրատական ինստիտուտների ուժեղացում:

ԼՂՀ-ի ազգաբնակչության անվտանգությունը և տնտեսական զարգացումը երաշխավորվում են մարտունակ բանակի առկայությամբ, որի ամենակարևոր առանձնահատկությունը նրա բարոյահոգեբանական վիճակն է: Այն միտված է պաշտպանելու իր հայրենակիցներին հերթական սպանդից, նվաստացումից, դավանափոխությունից, հողի և ունեցվածքի կորստից և, վերջապես, իր նախնիների գերեզմանների պղծումից: Նշված բարոյահոգեբանական իրադրությունում բանակը ստանում է աստվածային օրհնություն և դառնում անհաղթելի:

Այսպիսով, 2-րդ հայկական պետությունը կայացված է իր բոլոր բաղադրիչներով և միջազգային օրենքներով, որի անկախ պետականությունն առաջինը պետք է ճանաչի Հայաստանի Հանրապետությունը, իսկ հետագայում միջազգային ճանաչումների գործընթացում գործի կդրվեն մեր գաղթօջախների հնարավորությունները:

Մենք այլևս իրավունք չունենք սխալվելու՝ թեկուզ մի քիչ հող զիջելու ցնորքով, թե դրա միջոցով մեր ժողովուրդը ձեռք կբերի տնտեսական բարեկեցիկ վիճակ, ապաշրջափակում, բարեկամական շրջապատ և տնտեսական զարգացման լայն հնարավորություններ: Իրականում մեզ բաժին կհասնի հայ ժողովրդի կյանքի գնով հետ վերադարձված տարածքների կորուստ, թուրքական ապրանքների հեղեղ, հայրենական արտադրողի սնանկացում, հայկական կապիտալի արտահոսք, ժողովրդագրական (դեմոգրաֆիական) բում՝ ի վնաս մեզ և նոր ու ավելի հզոր արտագաղթ, քանի որ ըստ շուկայական օրենքների գործատուներ կլինեն թուրքեր և այլազգիներ: Միթե՞ մենք ձգտում ենք այս հեռանկարին:

Կարծում եմ, որ ներկա իրավիճակը պահանջում է որոշակի հստակություն մտցնել մեր արտաքին և ներքին քաղաքականության սկզբունքներում:

Արտաքին քաղաքականության բնագավառում, կարծում եմ, պետք է որդեգրենք օրենքով հստակ պահանջատիրության սկզբունքները մեր ազատագրված տարածքների, բռնազավթված հողերի, կողոպտված ունեցվածքի և մարդու իրավունքների ոտնահարված իրավիճակի կապակցությամբ: Այն պետք է հիմնավորված լինի պատմական անառարկելի փաստերի. միջազգային իրավունքի և դատարանների վճիռներով, իսկ ներքին կյանքում պետք է ամեն ինչ անել միասնական, արդար, ժողովրդադեմոկրատական, քաղաքակիրթ երկիր կառուցելու համազգային ձգտումները, կյանքի կոչելու հասարակական պահանջը իրականություն դարձնելու հրամայականը: Չմոռանալով Ջավախքի հիմնախնդիրները և ծագած տնտեսական ու քաղաքական նոր ըմբռնումները և, կարևորելով վրաց-հայկական իշխանությունների փոխպայմանավորված պարտավորությունների ու գործողությունների հստակ կատարման անհրաժեշտությունը, ազնիվ հարևանական փոխհարաբերությունների դաշտում: Այն, ըստ մեզ, ներկա պատմական ժամանակաշրջանում իրական (ռեալ) է, փոխշահավետ երկու կողմերի համար և իրագործելի:

Կարևորելով Նախիջևանի փաստարկը, որպես հայաթափված երկրամաս, որտեղ այժմ էլ կատարվում է հայկական եկեղեցիների, խաչքարերի և նույնիսկ գերեզմանների ոչնչացում, մեր քաղաքականության նպատակը պետք է լինի ցուցադրելու համայն աշխարհին թուրք-ադրբեջանական քաղաքականությունը և նպատակների վերջնական դրսևորումը համայն մարդկությանը: Լուսաբանելով այս անհերքելի փաստարկը, կարելի է կանխատեսված համարել Արցախի ապագան, եթե այն լինի Ադրբեջանի կազմում:

Կարծում եմ, որ Թուրքիան և Ադրբեջանը եղեռնի իրագործման, իրենց հարևան Հայաստանի հողերի բռնագրավման, պատմական հուշարձանների ոչնչացման, հայերի ունեցվածքի թալանման, բազմաթիվ այլ մեղքերի իրագործման և, վերջապես, պատմական փաստերի նենգափոխման համար պետք է տրվեն միջազգային դատի, չմոռանալով նաև 1918 թվականի սեպտեմբերի ջարդը Բաքվում, 1920 թ. Շուշիի հրկիզումը, Սումգայիթը և բազմաթիվ այլ ոճրագործությունները, որոնք 500 հազար հայերի դարձրին գաղթական: Այս ամենը կատարվել է ոչ թե հեռավոր պատմական անցյալում, և հայերի վստահությունը ստանալու համար Ադրբեջանի պետությունից պահանջվում է վարել բարեկամական պետական քաղաքականության և ոչ «հայատյաց»: Այդ է պահանջում քաղաքակիրթ մարդկությունը, այդ թվում նաև Եվրամիությունը, ինչին ցանկանում են անդամագրվել Թուրքիան և Ադրբեջանը:

Ինչու Եվրադատարանի առջև պետականորեն հարց չհարուցել և չդատապարտել Թուրքիային և Ադրբեջանին եղեռնագործության համար, չէ՞ որ նրանց կողմից այժմ ակտիվ կերպով փորձեր են կատարվում պատմականորեն հերքելու Հայաստանի և Արցախի հայկական էթնիկական տարածք լինելու իրողությունը (պատմական փաստերը կեղծող, Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ տիկին Ֆ. Մամեդովայի գիրքը կովկասյան «Ալբանիան և ալբանացիներ» գիրքը, 698 էջ) և այդ ֆոնի վրա հայերին ներկայացնում են անցյալի և ներկայի օկուպանտների դերակատարմամբ: Կարծում եմ, որ մամեդովաների նոր արշավանքներին պետք է տալ նաև գիտական հակահարված և պահանջել միջազգային գիտական հասարակությունից զրկել նրանց գիտական կոչումներից՝ պատմական փաստերը կեղծելու համար: Դա է մեր պատմաբանների խնդիրը, այնպիսի զգուշությամբ, որ ոչ թե մտնել «այլակարծիքային դաշտ», այլ հրապարակել սուտը հերքող փաստեր և դրսևորել նրանց կողմից պատմական փաստերն ի օգուտ քաղաքականության կեղծելու լկտի փորձերը, որոնց տրվում է պետական հովանավորություն:

Այսպիսով, փորձենք սահմանել համահայկական հայեցակարգի առաջնահերթությունները՝

1. 1915 թվականի, դրանից առաջ և հետո հայ ժողովրդի նկատմամբ իրականացված եղեռնի միջազգային ճանաչումը և մեր պահանջատիրությունները:

2. ԼՂՀ-ի ճանաչումը Հայաստանի Հանրապետության կողմից և միջազգային ճանաչման քաղաքականության որդեգրումը Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի գաղթօջախների կողմից:

3. Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և Արցախի կողմից պետք է ընդունվի «Հռչակագիր Արցախի անվտանգության ապահովման վերաբերյալ», որն իր մեջ կներառի ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բաղադրիչներ ու, ըստ էության, կկազմվի հայության ծրագիրը Արցախի գոյության և զարգացման վերաբերյալ:

4. Ջավախքի հիմնախնդիրների շուրջ հայ-վրացական բազմաբովանդակ պայմանագրի կնքումը:

5. Հայը զինվոր է, և Հայաստանը պետք է ունենա հզոր և չքաղաքականացված բանակ: Ամեն ինչ բանակի համար նշանաբանով: Սա նշանակում է.

- Համայն հայության մտավոր և տնտեսական կարողությունների կենտրոնացում՝ բանակի հզորացման և արդիականացման նպատակով, տնտեսության ազատ զարգացումով, պետության առավել դեմոկրատացմամբ և մեր պահանջատիրության միջազգայնացման քաղաքականության որդեգրմամբ:

- Մենք այլևս չպետք է համաձայնվենք ապրել թուրքալեզու ազգերի մշտական եղեռնի վտանգի ներքո: Երիտասարդ սերունդը պետք է քաջ ծանոթ լինի ոչ միայն մեծ եղեռնին, այլև պետք է լավ իմանա Բաքվի, Սումգայիթի, Գյանջայի, Շուշիի, Խոջալոփ և բազմաթիվ այլ եղեռնագործությունների մասին, որոնք կատարվեցին ոչ հեռավոր անցյալում: Չմոռանալով անց-

յալը, չխռովելով հարևաններից, մեր քաղաքականության հիմքում դնելով արժանապատիվ պահանջատիրություն և դատավոր, թշնամության փոխարեն՝ քաղաքակիրթ, պրագմատիկ քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետությունը և Արցախը, գտնվելով գերհզոր երկրների շահերի բախման կիզակետում և այժմ էլ օրեցօր սրվող մրցակցային պայթունավտանգ դաշտում, պետք է սահմանեն իրենց խաղի օրենքները, չմասնակցեն ռազմական ընդհարումներին՝ բարձր գնահատելով փոխշահավետ հարևանության գաղափարը, հարևան երկրներում ապրող հայ համայնքների առկայությունը՝ հանդես գալ որպես միջնորդ, վիճելի խնդիրները խաղաղ պայմաններում լուծելու նախաձեռնող, որպես եղեռն ապրած, բայց բարի կամքի տեր երկիր:

6. Նախիջևանի հայաթափման, հուշարձանների ոչնչացման իրողության փաստագրումը և մեր փոխհատուցման պահանջները Ադրբեջանի նկատմամբ:

Շարադրված սկզբունքները նպատակ ունենք դարձնել քննարկման առարկա: Այն կարող է հղկվել, լրացվել, ճշտվել՝ այս հույժ կարևոր հարցում միասնական տեսակետներ մշակելու նպատակով:

Միքայել ԲԱԲԱԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ և ԼՂՀ գիտատեխնիկական
զարգացման հանձնաժողովի համանախագահ,
ՌԴ բնական գիտ. ակադեմիայի ակադեմիկոս



ՏԵՍԱԿԵՏ «Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթների» վերաբերյալ

Մեր կարծիքով նշված «Հայեցակարգային դրույթների» հիմնական մասը փոխառնված է ինչ-որ երկրորդ երկրի «դրույթներից», բայց կարևորն այդ չէ: Կարևորն այն է, թե որքանով ճիշտ է գնահատված գիտության արդի վիճակը Հայաստանի Հանրապետությունում:

Անցնելով քննարկվող առարկայի էությանը՝ նշենք հետևյալը.

«Հայեցակարգային դրույթների» առաջին բաժնում սևով սպիտակի վրա գրված է. «Հայաստանի Հանրապետությունում գիտությունը որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն, մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո»: Այս նախադասության մեջ անհերքելիորեն ճիշտ է առաջին՝ գիտության գնահատականին վերաբերող մասը, սակայն իրականությունից շատ ու շատ հեռու է վերջաբանը, ուր գրված է, որ «մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո»: Նման գնահատականը նույնիսկ ծիծաղելի է: Ի՞նչ ուշադրության մասին է խոսքը, երբ հայրենական գիտությունը ֆինանսավորվում է պետության «այլ ծախսերի» հաշվին, երբ գիտնականի համար սահմանվել է 22 հազ. դրամ աշխատավարձ (այսօր Գիտությունների ազգային ակադեմիայի բնագավառում աշխատող գիտությունների դոկտորին վճարվում է 28 հազ. դրամ աշխատավարձ), երբ գիտնականը կտրված է արտասահմանյան գործընկերներից, գործուղման հնարավորությունից, գիտական ժամանակակից նվաճումների մասին գրականություն ձեռք բերելու հնարավորությունից և այլն և այլն:

Համոզված ենք, որ հայրենական գիտությունը ոչ թե գտնվել է «պետության ուշադրության ներքո», այլ ընդհակառակը՝ դուրս է մնացել պետության ուշադրությունից, նույնիսկ ավելին, կառավարության որոշ գործիչներ հայրենական գիտությանը, ասել է թե գիտնականին, «նայել են» որպես բորբոքված կույր աղիքի, ցանկացել են «կտրել ու հեռացնել», բայց, փառք Աստծո, որ չեն կարողացել:

Այսօր Գիտությունների ազգային ակադեմիայի բնագավառում աշխատող գիտությունների դոկտորը շատ ավելի քիչ է վարձատրվում, քան Ազգային ժողովի հավաքարարը: Էլ չեմ խոսում համալսարանը նոր ավարտած, Ազգային ժողովում ոչ առաջատար և ոչ էլ գլխավոր, այլ միայն և միայն առաջին կարգի մասնագետի պաշտոնում աշխատող երիտասարդի աշխատավարձի մասին, որը գիտությունների դոկտորի աշխատավարձից մեծ է մի քանի անգամ:

Նույն բաժնի առաջին պարբերության երրորդ նախադասությունը հայտարարում է. «Անկախության տարիներին ապահովվել է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժի պահպանումը...»: Դարձյալ կեղծիք: «Դրույթների» հեղինակների հիշողությունը, ինչպես երևում է, շատ կարճ է եղել: Ինչպես է «ապահովվել գիտական ներուժի պահպանումը», երբ այն խոշոր չափերի հասնող արտահոսք է ունեցել: Այդ մասին հետագայում բազմիցս նշում են հեղինակները, նույն բաժնի միջնամասում հեղինակները գրում են. «Օրախնդիր է դարձել որակյալ գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում արտերկիր»: Այնուհետև «Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ծրագրերի խիստ անբավարար ծավալները և երիտասարդ գիտնականների արտահոսքը վտանգավոր սահմանագծի են մոտեցել...»:

Հայաստանում մնացել են մեծամասամբ տարիքավոր (ծեր) գիտնականներ, նրանք, ովքեր կամ հնարավորություն չեն ունեցել կամ էլ ուզղակի չեն ցանկացել հեռանալ հայրենիքից: Արտահոսքը գիտնականների շրջանում որոշակի գնահատականներով կազմել է մոտավորապես 40%:

Ա՛յ, եթե «դրույթների» հեղինակները գրեին, որ «գիտական ներուժի պահպանումը ապահովվել է» մասամբ, կլիներ պարզ ու հասկանալի և առարկության չէր արժանանա, բայց, ցավոք, այդպես չի գրվել:

Եվ, այդուհանդերձ, ստանալով չնչին աշխատավարձ, աշխատելով մեծամասամբ տարրական կոմունալ հարմարություններից զուրկ և կիսաքանդ շենքերում, չջեռուցվող սենյակներում, վերարկուների մեջ փաթաթված ու կուչ եկած, գիտնականներն աշխատել ու արարել են: Համոզվելու համար վերցրեք թեկուզ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտնականների կողմից հրատարակած գիտական աշխատությունները՝ հոդվածներն ու մենագրությունները (գրքերը), կատարած առաջարկությունները, և դուք կհամոզվեք, որ գիտնականներն աշխատել ու արարել են, այլ ոչ թե «փոշիացրել» են պետության տված չնչին միջոցները:

Ֆինանսական հատկացումների փոշիացման վերաբերյալ նույն առաջին բաժնի նախավերջին պարբերության (այնուհետև ևս մեկ անգամ) նշված է. «Գիտության ոլորտում ներկայիս կազմակերպական ձևերում առանց այդ էլ խիստ անբավարար ֆինանսական հատկացումները հիմնականում փոշիացվում են...»: Այստեղ հարց է ծագում, ինչպե՞ս և որքանո՞վ են փոշիացվում, ո՞ւր են ստուգող կազմակերպության ակտն ու եզրակացությունը, ովքե՞ր են պատժվել նմանօրինակ փոշիացումների համար, որքանո՞վ են վերականգնվել պետությանը հասցված ֆինանսական վնասները և այլն, և այլն: Համոզված ենք, որ «դրույթների» հեղինակները չեն կարող պատասխանել նշված հարցերից թեկուզ մեկին:

«Դրույթների» երկրորդ մասի՝ «Գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում, ձևերի հստակեցում, ֆինանսավորման արդյունավետության բարձրացում» երկրորդ բաժնում գրված է. «Գիտության ֆինանսավորման ծավալների մեծացումը ենթադրում է էապես ավելացնել ՀՀ պետական բյուջեից գիտությանն ուղղված միջոցները: Սույն հայեցակարգից բխող համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում անհրաժեշտ է այն աստիճանաբար ավելացնել՝ հասցնելով 2010թ. ՀՆԱ-ի 1%-ի չափին, իսկ 2015թ. ՀՆԱ-ի 2%-ի չափին»: Այստեղ դարձյալ հարց է առաջանում, իսկ որքա՞ն է կազմելու գիտության ֆինանսավորման չափը 2007-2009 թվականներին: Միգուցե այդ տարիներին գիտությունն ընդհանրապե՞ս չի ֆինանսավորվելու: Կամ ինչ «էապես մեծացման» մասին է խոսքը, երբ 2010-2014թթ. գիտության ֆինանսավորման չափը կազմելու է ՀՆԱ-ի ընդամենը 1%-ը, իսկ 2015թ.-ից հետո՝ 2%-ը: Եթե այսօր գիտության ֆինանսավորման չափը կազմելով ՀՆԱ-ի 0,3%-ը ԳԱԱ բնագավառում աշխատող գիտությունների դոկտորի աշխատավարձը կազմում է 28 հազ. դրամ, ապա ենթադրվում է, որ 2010–2014թթ. ՀՆԱ-ի նույնիսկ կրկնակի աճի պարագայում գիտությունների դոկտորի աշխատավարձը կարող է կազմել լավագույն դեպքում 185 հազ. դրամ, այն դեպքում, երբ կառավարության ներկայացմամբ և Ազգային ժողովում քննարկվող բաղաքացիական ծառայողի աշխատավարձը հենց այժմ 2007թ.-ից կազմելու է 300-ից 500 հազ. դրամ, իսկ 2010-2014թթ. այն կարող է կազմել մեկ միլիոն դրամից ավելի: Դարձյալ հարցեր ու հարցեր:

Հարգելի գործընկերներ, հարգելի ՀՀ քաղաքացիներ, ասացեք խնդրեմ, այդ ո՞վ է, որ ՀՀ ԳԱԱ բնագավառում աշխատող գիտությունների դոկտորի պարտավորությունների ու պատասխանատվության մակարդակը գնահատում է 6 անգամ ավելի փոքր, քան քաղաքացիական ծառայողինը (գուցե քաղաքացիական ծառայողի գիտական մակարդակն է 6 անգամ բարձր գիտությունների դոկտորի մակարդակից, գուցե...): Այդ ո՞վ է, որ գիտության արժանիքները, ասել է, թե գիտնականի, գիտությունների դոկտորի արժանիքներն ու ծառայությունները, որին «դրույթների» հեղինակները համարում են «Տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն», նվաստացնում ու ստորացնում է այն աստիճան, որ ցանկություն է առաջանում թողնել ու հեռանալ գիտությունից, գնալ ու շատ-շատերի նման վերավաճառող կամ էլ օլիգարխների շինարարության վրա բանվոր աշխատել: Ճիշտ է, դրանք անպատվաբեր աշխատանքներ են գիտնականի համար, բայց այդ աշխատանքներում կարելի է առնվազն երկու-երեք անգամ ավելի շատ վաստակել, քան Գիտությունների ազգային ակադեմիայի բնագավառի«.պատվաբեր» աշխատանքներում:

Եվս մի հարցի մասին կցանկանայի խոսել: «Գիտական ներուժի վերարտադրության ապահովում» բաժնում հեղինակները գրում են. «Ապիրանտուրայի հետբուհական գիտակրթական ծրագրում կընդլայնվի կրթական բաղադրիչը, և կավելացվի ուսման տևողությունը այն դարձնելով համադրելի և համընթեռնելի արտերկրում գործող հետբուհական կրթական երրորդ աստիճանի հետ: Այն հաջողությամբ ավարտողներին, ովքեր կպաշտպանեն նաև ավարտական ատենախոսություն, կշնորհվի փիլիսոփայության դոկտորի (PhD) և կամ դրան հավասարեցված գիտական աստիճան» (թե ինչի համար է այստեղ «համընթեռնելի» բառը՝ հասկանալի չէ): Ասենք հետևյալը, մեխանիկորեն ընդօրինակելը հեռավոր արտասահմանյան երկրներում գոյություն ունեցող կարգ ու կանոնին՝ միշտ չէ, որ մեզ կարող է հաջողություն ու բարիք բերել: Ի՞նչ է նշանակում քիմիկոսին, պատմաբանին, երկրաբանին, մաթեմատիկոսին, կենսաբանին, բժշկին, ճարտարագետ-շինարարին ու դրանց հետ էլ փիլիսոփային, թեկնածուական ատենախոսության պաշտպանողին հավասարապես փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի շնորհումը: Ո՞ւր է կորչում առաջինների մասնագիտական աստիճանը: Կամ ինչպե՞ս պետք է տարբերվեն փիլիսոփայության դոկտորի երկու գիտական աստիճանները, դրանց դիպլոմները. մեկը՝ փիլիսոփայության թեկնածուի ատենախոսության, մյուսը փիլիսոփայության դոկտորի ատենախոսության պաշտպանությունից հետո ստացած դիպլոմը: Հաջորդը, ի՞նչ ենք անելու մինչ սույն կարգի հաստատումը գիտնականների հետ. միգուցե դրանց ևս փիլիսոփայության դոկտորի մեկական դիպլոմ բաժանենք ու համատարած փիլիսոփաներ պատրաստենք՝ և կոչվենք Հայաստանի փիլիսոփայության ակադեմիա:

«Գիտության և կրթության ինտեգրումը» բաժնում «դրույթների» հեղինակները, դարձյալ ընդօրինակելով զարգացած երկրներում գործող կարգը, առաջարկում են «որոշ գիտական կազմակերպություններ միավորել համալսարանների հետ»: Շատ չե՞ն շտապում պարոնայք հեղինակները: Դրանով չե՞ն ձգտում, արդյոք, բանդել ու ոչնչացնել Գիտությունների ազգային ակադեմիան: Հասկանո՞ւմ են արդյոք, որ այսօր և սրանից դեռևս 20 տարի հետո էլ Հայաստանում դա հնարավոր չի լինելու իրագործել առանց գիտությանը կործանարար վնասներ հասցնելու:

Նշված «միավորման» և գիտությունը պետական ֆինանսավորման ոլորտից դուրս բերելու անհնարինության վերաբերյալ մենք արդեն իսկ հիմնավորումներ տվել ենք (տե՛ս «Գիտություն» թերթի 2006թ. 4-րդ և 5-րդ համարները):

Մենք չգիտենք, թե ովքեր և որտեղ են կազմել (մշակել) նշված «դրույթները», բայց մի բան լավ գիտենք, որ այն վերամշակելու, շտկելու, հայրենի գիտության զարգացմանը նպաստող ծրագիր դարձնելու անհրաժեշտություն է պահանջում, և դրանք պետք է կատարվեն Հայաստանի բոլոր գիտնականների համատեղ ջանքերով՝ գիտության ներսում: Առանց բոլոր գիտնականների, բոլոր ստորաբաժանումներում աշխատող շահագրգիռ անձանց կարծիքը հաշվի առնելու՝ կազմված «դրույթները», ծրագրերը կամ նախագծերը կլինեն միակողմանի և դատապարտված ձախողման: Այնպես որ, կոչ ենք անում մեր երկրի բոլոր գիտնականներին՝ ակտիվ մասնակցություն ունենալ նշված «դրույթների» քննարկման ու շտկման գործընթացին:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր

Հայաստանի գիտության կանայք

Մոտ օրերս լույս տեսավ Ս. Ավագյանի «Նշանավոր հայուհիներ» գիրքը, նվիրված այն հայ կանանց, որոնք զգալի ներդրում ունեն Հայաստանի տնտեսության, արվեստի՝ գիտության և այլ բնագավառներում:

Գրքում խոսվում է նաև ինժեներ-հիդրոտեխնիկ, գիտնական, Նյու Յորքի ակադեմիայի ակադեմիկոս, էկոլոգիայի և կյանքի անվտանգության միջազգային ակադեմիայի անդամ, Հայաստանի առաջին կին-տեխնիկական գիտությունների թեկնածու (14.06.1948 թ.), ավագ գիտաշխատող, Հայրենական Մեծ պատերազմի վետերան, անհատական թոշակառու Սեդա Մկրտիչի Իսահակյանի մասին:

Մենք սույն հոդվածով ուզում ենք անդրադառնալ Մ. Իսահակյանի գիտահետազոտական աշխատանքներին, որին հաջորդեց և հաճախ զուգակցվեց կիրառական պրակտիկան:

Թեկնածուական թեզի թեման էր «Ձագարների առաջացումը հիդրոտուրբիններում»: Այստեղ ուսումնասիրվեցին հողմերի առաջացման պայմանները, նրանց առաջացման հաճախականությունը և ինտենսիվությունը: Հետագայում պարզվեց, որ հողմերի առաջացման պատճառը հպման ուժերն են, որ առաջանում են երկու միջավայրերի (հեղուկ-օդ, հեղուկ-պինդ մարմին) սահմանում և հենց նրանց ազդեցությունից է, որ տատանվում են հպվող մարմինները: Հեղինակի կողմից առաջադրվեց մի բանաձև այդ հպման ուժերը հաշվարկելու համար, իսկ հետագայում նաև մարմինների սեփական տատանումների հաճախականությունները որոշող բանաձևը:

Այսպիսով, հայտնաբերվեց մի օրինաչափություն, որը թույլ տվեց հաշվարկելու մարմինների սեփական տատանումների հաճախականությունը տարաբնույթ (հետերոգեն) միջավայրում: Հենց այդ տատանումներն են, որ կենդանի աշխարհում կոչվում են բիոռիթմեր. և քանի որ մեր աշխարհը տարաբնույթ (հետերոգեն) միավայր է, ուրեմն և հիդրոդինամիկայի օրենքները գործում են ամենուրեք՝ կենդանի ու անկենդան աշխարհում և շատ մեծ, և շատ փոքր մարմինների դեպքում: Ավելին, «Հողմերի կայուն համակարգերը (գնդաձև, օղարաձև, պտուտակաձև) ձևավորվում են օրգաններ, բջիջներ, մարմիններ ու նաև անկենդան բնությունը»: Դա բացատրվում է նրանով, որ հենց այդ ձևի մարմիններն են, որ օգտագործելով փոքրագույն քանակի էներգիա, իրենց կենսունակությունը ապահովելու համար, պահպանում են իրենց սեփական գոյությունը:

Ուսումնասիրությամբ ցույց է տրված մարմնի և միջավայրի անմիջական կապը ու նրանց ամբողջականությունը, մարմնի հարմարվողականության հնարավորությունները, համաձայն հպվող մարմինների պարամետրերի բազմազանության, ինչպես նաև մարմինների արձագանքելու ունակությունը: Դա հնարավորություն է տալիս ղեկավարելու օրգանական և անօրգանական մարմինների աշխատանքը՝ օգտագործելով այն տնտեսության, առողջապահության և այլ բնագավառներում: Դրա վառ օրինակն են հեղինակի կողմից կատարված աշխատանքները, որոնք հետագայում ձևակերպվեցին որպես հեղինակային արտոնագրեր (7), ներդրումներ (28), մենագրություններ (3):

Այսպիսով, Ս. Իսահակյանի աշխատությունները հաստատեցին այն հիմնադրույթը, որ ամբողջ կենդանի ու անկենդան աշխարհը տատանվում է, այսինքն՝ շարժման մեջ է և այդ շարժումը ունի իր որոշակի հաճախականությունները, որոնք հնարավոր է հաշվարկել և օգտագործել ամենուրեք:

Ահա, այսպիսին է մեզ ներկայանում տեխնիկական գիտությունների թեկնածու, գիտնական-հիդրոտեխնիկ Սեդա Իսահակյանը:

Մարիամ ՄԱՏԻՆՅԱՆ

Որտեղի՞ց այսքան անտարբերություն

Ամեն մի գրագետ մարդ հասկանում է, որ շենքի հիմնաքարը հանելուց խարխլվում է ամբողջ շենքը, և բավական է մի փոքր ցնցում, որ հիմնովին այն քանդվի: Այդպես է նաև գիտության մեջ: Բոլորին հայտնի է, թե ինչպիսի նվաճումներ ենք ունեցել գիտության ասպարեզում, ինչ գնով: Ավելի լավ չենք ապրել, բայց եղել է հավատ ապագայի նկատմամբ, եղել է գնահատվելու հույսը, ինչու չէ՝ նաև ֆինանսական առումով:

Հաճախ եմ զանազան տհաճ առիթներով կրկնում, որ նույնիսկ չուկչաներն էլ ունեն գիտությունների ակադեմիա, մինչդեռ կանգնած ենք երկընտրանքի առաջ՝ ունենալ՝ թե չունենալ: Ես կարծում եմ, որ եթե Գիտությունների ակադեմիան չի նպաստում, չի խրախուսում գիտությանը և գիտնականներին, ուրեմն ճիշտը՝ չունենալն է:

Մինչդեռ պետք է մեկ անգամ կշեռքի նժարին դնել գիտության, գիտնականների նվաճումները և մեկընդմիշտ ասել՝ ԱՅՈ՛:

Մինչև անկախությունը ՀՍՍՀ-ում գոյություն ուներ գյուտարարության կոմիտե, որտեղ հատուկ աշխատակիցներ գրանցում էին Հայաստանից ուղարկված գյուտերը: Արդյունքում տարեկան հաստատվում էր 1300-ից ավելի գյուտ, մինչդեռ անկախության 15 տարիների ընթացքում հաստատվել է 1700-ից մի փոքր ավել գյուտ: Այս թվերը հաստատում են այն փաստը, որ կառավարությունը պատշաճ վերաբերմունք չի ցուցաբերում ո՛չ գիտության, և ո՛չ գիտնականների նկատմամբ:

Գիտությանը խանգարող կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ գյուտը ձևակերպելու և հաստատելու համար անհրաժեշտ է մինչև 35.000 դրամ, որը չունեն ոչ ինստիտուտները և առավել ևս՝ գիտնականները:

Հասարակության սոցիալական անապահով խավերին հաշվարկելով՝ ոչ մի տեղ չի նշվում, թե դրանց մեջ ի՞նչ տոկոս են կազմում գիտնականները: նրանց աշխատավարձը կազմում է հանրապետության նվազագույն աշխատավարձից մի փոքր ավելի՝ գիտության դոկտորը 60 դոլար, իսկ թեկնածուն՝ 40-50 դոլար, էլ չեմ խոսում սովորական գիտաշխատողների մասին, որոնք նույնպես մեծ դեր ունեն գիտության մեջ:

Այսքան տարիների ընթացքում չեմ հիշում մի դեպք, որ մեզ մոտ մրցույթ հայտարարվի այս կամ այն հարցի լուծման առիթով, եթե հայտարարվում էլ է, ապա իմիջիայլոց, ոչ բոլորին ականջալուր:

1992 թվականին ВАСХНИЛ-ը հայտարարել էր մրցույթ՝ գյուղմթերքների պահպանման հետ կապված նոր տեխնոլոգիաների առաջադրում: Մրցույթին ներկայացվել էր 3000 հայտ, որից ընդունվեց 300-ը, իսկ մրցույթով անցավ ընդամենը 15 աշխատանք, որից մեկը պատկանում էր տողերիս հեղինակին: Խոսքն իմ մասին չէ: Ասածս ապացույց է, որ Հայաստանի գիտնականները միշտ էլ եղել են գիտության առաջավորների մեջ: Սա միայն մեկն է, իսկ այս ցանկը կարելի է շարունակել:

Հանքավայրերի վաճառքը արտասահմանցիներին ևս մի վառ ապացույց է, որ մեր վերադաս կազմակերպություններն աշխատում են օր առաջ գլուխներն ազատել գլխացավանքից: Վաճառելով Արագածի պեռլիտի հանքերը, գոնե մի անգամ չհարցրեցին գիտնականներին՝ արժե՞ թե չարժե: 45 տարի աշխատելով այդ հանքավայրի պեռլիտների հետ՝ ինչե՞ր ասեք, որ չի ստացվել և կիրառվել դրանցից ստացված նյութերը ժողովրդական տնտեսության՝ քիմիական, բժշկական, սննդի այլ և այլ բնագավառներում: Բերեմ պեռլիտից ստացված մի քանի օրինակ. զտող փոշին այսօր միջազգային շուկայում գնահատվում է 1100 դոլար մեկ տոննայի համար: Իսկ քանի-՝ քանի տեսակ զտող փոշիներ են արտադրվել ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի փորձնական գործարանում:

Անտարբերությունը, որը գոյություն ունի գիտական աշխարհի նկատմամբ, դեռ բազում չարիքների պատճառ կարող է դառնալ: Անկախ բնակլիմայական պայմաններից, շենքերը կառուցվում են նույնատիպ տանիքներով, որոնք հաճախ քամիները ավերում են: Մինչդեռ գոյություն ունեն հարթ կտուրներ, որոնք որոշակի քիմիական մշակման ճանապարհով կարող են կանգուն մնալ տասնյակ տարիներ:

Ի՞նչ ենք անում հեղեղներից փրկելու մեր հողերը, տները և այլն. գրեթե ոչինչ: Նորից նույն արհամարհանքը գիտական նվաճումների նկատմամբ և հաշտվողականություն այն վիթխարի նյութական կորուստների հետ, որոնք հատուցվում են պետության հաշվին:

Վերջերս նոր ընտրված ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում նշեց մի նորույթ, որին տարիներ շարունակ սպասում էինք՝ ստեղծել ներդրումների կենտրոն, որն ի մի կբերի նախ գիտական այն նվաճումները, որոնք շատ կարճ ժամանակում ֆինանսական մեծ օգուտներ կբերեն հանրապետությանը և հետագայում դրանց հաշվին հնարավորություն կստեղծվի զարգացնել նոր ուղղություններ:

Վերջում մի ցանկություն: Ինստիտուտներում նախ հաշվառել գիտական նվաճումները, ապա նոր օպտիմալացնել: Կարծում եմ, որ հեռանկարում պետք է այնպես անել, որ երիտասարդները աշխատեն մեծերի կողքին, անցնեն նրանց դպրոցը և շարունակեն այն:

Վերջերս հայտնվեց ևս մեկ տերմին՝ օրգանական գյուղատնտեսություն, որը պետք է գործի ռումինացիների, բուլղարացիների օգնությամբ: Մինչդեռ մեր գիտական օջախներում, դրանց դարակներում դեղնում են բազում նվաճումների գրանցումները, որոնք չեն կիրառվում: Հաճույքով ընդունում ենք դրսից ներմուծվածը. գուցե՞ որոշ մարդկանց դա ձեռնտու է...

Ռիմա ՄԱՆՈՒԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

Տիգրան Պետրոսյան. դպրոցական տարիներ

➢4 սեանսներին: Շատ հետաքրքիր էին, այսպես ասած, «կույր» խաղերը: «Կույր» խաղի երկու ձև կար. մի դեպքում մեկը խաղում էր հիշողությամբ, իսկ մյուսը՝ բաց տախտակի առջև, և երկրորդը՝ երբ երկուսն էլ խաղում էին հիշողությամբ, թելադրելով իրենց քայլերը երրորդ շախմատիստին, որը մեծ ցուցադրական տախտակի վրա կատարում էր քայլերը: Տիգրանը գերադասում էր երկրորդ ձևը: Նա հաճախ երիտասարդ Բրավիցկու հետ անզիջում և փոխհաջողակ պայքար էր մղում: Այդ ժամանակ Բրավիցկին, որը էվակուացվել էր Խարկովից, լուրջ հույսեր էր ներշնչում, սակայն հետագայում թողեց շախմատը, դարձավ խոշոր գիտնական և Լենինյան մրցանակի դափնեկիր: Մենք բոլորս հետևում էինք այդ հետաքրքիր մենամարտին: Հիմա էլ աչքիս առաջ են. մեկը նստած է պատի մոտ՝ մեջքով դեպի ցուցադրական տախտակը, մյուսը՝ մեկ այլ անկյունում, նորից մեջքով դեպի ցուցադրական տախտակը: «Կույր» խաղը շատ էին սիրում նաև մյուս առաջատար շախմատիստները: Դա, կարծես թատերական ներկայացում լիներ: Նրանք խաղում էին փայլուն, առանց կոպիտ սխալների: Խաղի այդ ձևը համարվում էր հիշողությունը մարզելու լավագույն միջոց: «Կույր» խաղը մեր՝ սկսնակներիս համար ավելի ուսուցողական էր, քան կայծակնային խաղերը: Մենք դժվարանում էինք հետևել կայծակնային խաղի ընթացքին և գնահատել իրավիճակը ամեն քայլից հետո, իսկ «կույր» խաղի դեպքում մենք ոչ միայն կարողանում էինք հետևել խաղի ընթացքին, այլև տեսնել երրորդ անձի՝ տվյալ դեպքում մեծ ցուցատախտակի վրա ֆիգուրներ տեղափոխող շախմատիստին, որը հաճախ անձայն, ցուցադրում էր իր կարծիքով հնարավոր տարբերակները: Մեզ համար դա լավագույն պարապմունքներից մեկն էր: Խաղից հետո միասին կրկնում էինք կատարած քայլերը, լուսաբանելով հնարավոր տարբերակները և սխալները: Չնայած Տիգրանը վարժ էր «կույր» խաղում, բայց գերադասում էր միաժամանակյա խաղերը բազմաթիվ տախտակների վրա, որովհետև նա գտնում էր, որ միաժամանակյա խաղի սեանսը իր մեջ պարունակում էր և՛ կայծակնային (բլից) խաղի և «կույր» խաղի էլեմենտները (տարրերը): Այս դեպքում պահանջվում էր հիշել ու պատկերացնել յուրաքանչյուր տախտակը և արագ որոշում ընդունել ու այդ բոլորին գումարած լայն ու խորը տակտիկական վերլուծություն կատարել գնահատելու համար տախտակների ողջ խմբի, և ամեն մեկի վիճակը օպտիմալ շարունակություն ընդունելու համար... Հիշում եմ մի հետաքրքիր դեպք, որը ընդգծում է նրա այդ մտածելակերպը ցանկացած խաղի ժամանակ:

Պիոներպալատում մեր սովորական պարապմունքների ժամն էր: Հանկարծ ներս մտավ Տիգրանը, որը նոր էր վերադարձել ինչ-որ շախմատային միջոցառումից: Որոշ ժամանակ անց եկան նաև մի քանի բարձրակարգ շախմատիստներ: Տիգրանը 20-25 տախտակի վրա միաժամանակյա խաղի սեանս էր տալու: Մեր ուժերը Տիգրանի հետ չափելու շատ անսպասելի և ուրախ առիթ էր: Նա արդեն Վրաստանի լավագույն շախմատիստն էր համարվում: Մենք էլ արդեն սկսնակ չէինք: Տիգրանը մեծ արագությամբ անցնում էր մի տախտակից մյուսին, վայրկյանների ընթացքում կատարելով քայլերը: Խաղի միջին փուլում տախտակների թիվը անընդհատ նվազում էր:

Տիգրանը շարունակում էր իր երթը: Հանկարծ մի պահ կանգ առավ իր դասընկերոջ՝ Խոսրովի տախտակի առջև և կամաց շշնջաց «ոչ-ոքի»: Խոսրովը սառեց, ոչ մի բան չասաց: Տիգրանը թե՝ ի՞նչ է, համաձայն չե՞ս, ու արագ անցավ հաջորդ տախտակին: Ես խաղս թողած, զարմացած նայեցի Խոսրովին: Հանկարծ նա ծղրտալով վեր ցատկեց, չէր հավատացել ականջներին, ինչպես թե՝ «ոչ ոքի», ինչպես թե՝ «չե՞ս ուզում»:

Խաղերը ավարտելուց հետո մենք շրջապատեցինք Տիգրանին, նա ժպտալով հարցրեց. «Խոսրով, զարմացա՞ծ ես», հետո լուրջ բացատրեց, որ այդ տախտակի վրա մտածելու բան կար, իսկ ինքը ժամանակ չուներ, քանի որ մի քանի տախտակների վրա սկզբունքային խնդիր ուներ լուծելու և ինքը բոլորովին չէր ուզում զիջել: Եվ նորից հումորով, թե՝ ավելի լավ չէ՞ր ընկերոջս հետ ոչ-ոքի անել, քան թե իմ ամենօրյա սպորտային ախոյանների հետ: Բացի այդ, շարունակեց Տիգրանը, Խոսրովը շատ արագ նարդի է խաղում, այնպես որ, նա «վտանգավոր էր» տվյալ դեպքում: Խոսրովը թե՝ բայց ես ոչ մի վտանգավոր բան չէի տեսել իմ խաղում: Տիգրանը թե՝ ի՞նչ անեմ, բայց ես տեսել էի..

Եվ իրոք, Մեծ շախմատում ևս հաճախակի էին նման դեպքերը, երբ Տիգրանը նկատելով դիմացինի կողմից ինչ-որ, թեկուզ փոքր հակախաղի հնարավորություն, լրջորեն փոխում էր խաղի շարունակությունը՝ հաշվի առնելով այդ հնարավորությունը: Այդ դեպքը մտավ Խոսրովի կենսագրության մեջ իբրև լուսավոր մի հիշողություն: Թե՛ ուսանողական, և թե՛ հետագա տարիներին Խոսրովը շախմատ խաղալիս կիսահումորով և կիսալուրջ հիշեցնում էր դիմացինին, որ ինքը Տիգրան Պետրոսյանի հետ ոչ-ոքի է ունեցել:

***

Անցան տարիներ: Աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը եկավ Երևան, այցելեց նաև մեր հիմնարկություն: Հանդիպեցինք, լուսանկարվեցինք: Նրան ուղեկցում էին կինը՝ Ռոնան և մեր դպրոցի դասընկերներից Աշոտը, որը քանդակագործ էր և պատրաստվում էր Տիգրանի համար մետաղի վրա մի աշխատանք կատարել: Սկսեցինք զրուցել: Տիգրանը թե՝ գիտե՞ս, Վիգենին եմ հանդիպել, նա Աբովյանում մեծ դիրեկտոր է: Ասում եմ՝ գիտեմ, ես այնտեղ եղել եմ գործով: - Խոսրովին,- շարունակեց Տիգրանը,- տեսել եմ Մատենադարանում: Հիշեցինք պիոներպալատի «ոչ-ոքին»: «-Իսկ Կառլենին չեմ տեսել: Նա որտե՞ղ է»: Ասացի, որ նա աշխատում է Հաշվիչ մեքենաների ինստիտուտում և որ մենք նույն բակում ենք ապրում: Ժպտաց. «էլի միասի՞ն եք»: Հետո ավելացրեց. «Հա, ինձ հրավիրել են Մերգելյան, վաղը գնալու եմ, ուզո՞ւմ ես դու էլ արի»: Քանդակի համար պղնձի թիթեղ էր պետք: Առաջարկեցինք մեր օգնությունը: Աշոտը ուրախացած համաձայնվեց: Պահեստից բերեցին մի մեծ պղնձյա թիթեղ: Պարզվեց, որ դա քանդակի համար պիտանի չէր: Մաքուր պղնձյա թիթեղ էր պետք: Աշոտը հրաժարվեց վերցնել: Տիգրանը թե՝ չէ՛, ի՞նչ ես ասում, ես վերցնում եմ, ամառանոցում պետք կգա: Իհարկե կատակում էր: Ես զարմացած չէի, դա նույն Տիգրանն էր, շատ լուրջ և հումորից անբաժան: Նույն բանը կատարվեց հաջորդ օրը ինստիտուտի մեծ դահլիճում՝ բեմի վրա: Իրեն մատուցած հուշանվերը վերցրեց և սկսեց փնտրել գինը: Չգտավ ու զարմացած ասաց. «Սա կարգին թանկ կլինի»: Դահլիճը ծափահարում էր, հասկանալով մեծ շախմատիստի հումորը...

ՀԱՅԵՐԵՆԸ 50 ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հրապարակել էր աշխարհի 50 լեզուների ցուցակը, որոնցով ամենաշատ թարգմանություններն են արվում: Հայաստանն այդ ցուցակում զբաղեցնում է 50-րդ տեղը: Ամենաշատ թարգմանություններ հրատարակվում են անգլերենով, ֆրանսերենով, գերմաներենով, ռուսերենով և իտալերենով:

Բուսակեր մայրերը վտանգում են իրենց նորածինների առողջությունը

Վիտամիններից անգամ մեկի B12-ի պակասը օրգանիզմում կարող է խոչընդոտել նորածինների աճն ու զարգացումը: Երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման համար առանձնապես լուրջ վտանգ են ներկայացնում բուսակեր այն մայրերը, որոնք իրենց կերակրացանկից բացառել են մսեղենը, ձուն և կենդանական ծագում ունեցող այլ մթերքներ: Մինչդեռ վերոհիշյալ վիտամինը պարունակում են հատկապես կենդանական ծագում ունեցող մթերքները: Նշենք, որ B12 վիտամինը նյարդային և արյան բջիջների պահպանման հիմնական պատասխանատուն է:

Զորջիա նահանգի հիվանդությունների կանխարգելման կենտրոնը (CDC) արձանագրել է վիտամին B12-ի պակասի երկու առանձնահատուկ դեպք երկու երեխաների մոտ, որոնց մայրերը բուսակերներ են: Հետազոտման պահին երեխաներից մեկը 15 ամսեկան էր, իսկ մյուսը երկուսուկես տարեկան: Այնուամենայնիվ, նշված երեխաների մոտ խիստ նկատելի էր մտավոր և ֆիզիկական զարգացման դանդաղ ընթացք, նրանց բառապաշարը շատ ավելի աղքատիկ էր, քան իրենց տարիքի մյուս երեխաներինը: Նրանք նաև ֆիզիկապես էին թերզարգացած:

Բժշկական գիտությունների դոկտոր Մարիա Էլենա Զեֆֆերդան ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ վիտամինի պակաս կարող է նկատվել ոչ միայն բուսակերների օրգանիզմում, այլև նրանց օրգանիզմներում, ովքեր առանձնապես ուշադրություն չեն դարձնում իրենց ընդունած սննդի տեսականուն: Ըստ նրա «Ամերիկայում կան շատ ոչ բուսակերներ, որոնք, այնուամենայնիվ, ունեն օրգանիզմի համար անհրաժեշտ հիմնական վիտամինների պակաս»: Նա նշում է. «Այնքան էլ հեշտ չէ հայտնաբերել B12-ի պակասն օրգանիզմում, քանի որ հաճախ ախտանիշներն այնքան էլ ցայտուն չեն արտահայտված»: Մանկահասակ երեխաների մոտ B12 վիտամինի պակասը կարող է առաջ բերել թմրածություն կամ էլ խոչընդոտել մտավոր և ֆիզիկական զարգացմանը, հատկապես 4-8 ամսեկանների մոտ: Այն նաև կարող է առաջացնել մտապահման և շարժողական խնդիրներ: Չափահասների մոտ B12 վիտամինի պակասը կարող է հանգեցնել շատ ավելի լուրջ հետևանքների, ինչպես օրինակ գրգռվածություն, հոգեկան սթրեսներ, ընկճվածություն, զգայախաբություն, հիշողության կորուստ, պարանոյա և այլն:

Ինչպես մասնագետներն են հավաստում, վիտամիններով հարուստ բազմազան սնունդը, անգամ բուսակերների մոտ, կարող է ապահովել օրգանիզմի համար կենսական նշանակություն ունեցող վիտամինների քանակը: Մի շարք սննդատեսակներ, այդ թվում՝ չափահասների համար նախատեսված նախաճաշի շիլաները և սոյա պարունակող այլ սննդատեսակներ հարստացված են տարբեր վիտամիններով, այդ թվում B12-ով: Այդպիսի սնունդն անհրաժեշտ է հատկապես հղի կանանց և կերակրող բուսակեր մայրերին: Անհրաժեշտ է նաև ժամանակ առ ժամանակ ընդունել լրացուցիչ վիտամիններ:

Նյութն անգլերենից պատրաստեց
Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

Ով, ի՞նչ չափով է վախենում մահից

Որքան էլ ցավալի է և տխուր՝ մենք բոլորս մի օր մեռնելու ենք: Մեզանից ոմանք այդ հեռանկարից շատ են վախենում: Ոմանց դա նույնպես վախեցնում է, սակայն՝ ոչ այնքան: Կան մարդիկ էլ, որոնց այդ մահ կոչվածը ընդհանրապես չի վախեցնում: Միաժամանակ մարդկանց մեծ մասը մտածում է, որ «մահվան սարսափից» մարդուն կարող է «բուժել» կրոնը: Այդպե՞ս է արդյոք:

Միացյալ Նահանգների Մասաչուսեթսի համալսարանի հոգեբաններ Պոլ Ուինկը և Ջուլիա Սքոթը կարծում են, որ այդ պնդումը այնքան էլ ճշմարիտ չէ: Վերջերս նրանք մի հետազոտություն տպագրեցին՝ ծերունական հասակում կրոնապաշտության աստիճանի և մահից վախենալու հարաբերության մասին:

Իրենց հետազոտության համար անցկացրած փորձին նրանք ընդգրկել էին 155 60-70 տարեկան մեծահասակների: Գիտնականները օգտագործել էին նաև այդ բնագավառում մինչ այդ եղած ուսումնասիրությունների տվյալները:

Նշենք, որ գիտնականներն իրենք էլ գտնում են, որ իրենց հետազոտությունը հեռու է ավարտուն և կատարյալ լինելուց: Խոսքը վերաբերում է հետազոտվողների փոքր թվին, նրանց պատկանելությանը լոկ քրիստոնեական հավատին և այլն:

Եվ այսպես, ի՞նչ հետևությունների են հանգել Մասաչուսեթսի հոգեբան-գիտնականները:

Մահից ամենաքիչը վախենում են մոլի հավատացյալները: Երկրորդ տեղում են երդվյալ աթեիստ-հավատացյալները՝ անհավատները: Մահից ամենից շատ սարսափում են նրանք, որոնք գտնվում են այս երկու ծայրահեղությունների միջև, այսինքն՝ «չափավոր հավատացյալները»: Բացատրությունը պարզ է. նրանք վախենում են անդրշիրիմյան կյանքում իրենց սպասվող չարչարանքներից, այսինքն՝ դժոխքից: Այդ մարդկանց մեծ մասը ճշմարիտ հավատում են Աստծուն, սակայն եկեղեցի չեն գնում, քիչ են աղոթում, ծոմ չեն պահում և ուրիշ եկեղեցական ծեսեր:

Այլ խոսքով, գիտակցելով իրենց «լավ բարեպաշտ» չլինելու մեղքը, նրանք հասկանում են, որ դրախտի դռները իրենց համար փակ են: Այստեղից էլ նրանց սարսափը մահվանից, փիրկության ամեն մի հույսի բացակայությունը:

Երկնային պատժի հեռանկարը գրեթե չի անհանգստացնում մոլի հավատացյալներին, որոնք իրենց ողջ կյանքում ապացուցում և ապացուցել են իրենց նվիրվածությունը Աստծուն, իսկ աթեիստ-անհավատներին այս խնդիրը ամենևին չի անհանգստացնում ակնհայտ պատճառներով՝ ո՛չ դրախտի և ո՛չ էլ դժոխքի գոյությանը նրանք չեն հավատում:

«Չափավոր» հավատացյալների համար մահից բոլորից շատ վախենալու, մյուս պատճառը տարակուսելու մեջ է: Նրանք համոզված չեն՝ ընդհանրապես կա՞ արդյոք անդրշիրիմյան կյանք:

Աթեիստները իրենց մխիթարում են նրանով, որ կարող են հասնել «խորհրդանշական անմահության», նրանք իրենցից հետո թողնում են երեխաներ կամ մնայուն ստեղծագործություններ: Մոլի հավատացյալները անդրշիրիմյան կյանքի գոյության խնդրում ոչ մի տարակույս չունեն: Իսկ ինչ վերաբերում է «չափավոր հավատացյալներին», ապա խնդիրը բարդ է: Պրոֆեսոր Ուինկը նշում է, որ հավատացյալների շրջանում մեծամասնություն են կազմում հենց «չափավոր բարեպաշտները»:

Միացյալ Նահանգներում, օրինակ, քրիստոնյաների 80 տոկոսը հավատում է անդրշիրիմյան կյանքի գոյությանը, սակայն նրանցից միայն 40 տոկոսն է կանոնավոր հաճախում եկեղեցի:

«Ոչ թե բարեպաշտությունն ընդհանրապես, այլ ամուր և անսասան հավատն է այն հիմքը, որը ծերունական հասակում մեղմացնում է մահվան սարսափը»,- եզրակացնում են ամերիկացի գիտնականները:

Հետազոտողները բացահայտել են նաև, որ տարիքն առաջանալու հետ մարդկանց մեջ աստիճանաբար նվազում է անհանգստությունը և վախը սպասվող մահվան նկատմամբ:

Երբ մարդը դարձել է 70 տարեկան, տառապել տարբեր հիվանդություններից, հարազատների կորուստներ ունեցել և այլն, նա ավելի քիչ է վախենում մահվանից, քան, ասենք, 60 տարեկանում:

Ի դեպ, վերջերս Միացյալ Նահանգներում կատարված հարցումներից պարզվել է, որ հասուն տարիքի ամերիկացիների 32 տոկոսը (այսինքն՝ երեքից մեկը) կարծում է, որ հանգուցյալները կարող են վերադառնալ՝ որպես ուրվականներ և ոգիներ:

Հելապի ինստիտուտը հարցում է արել 1000 ամերիկացիների և տեղեկացել, որ նրանցից 48 տոկոսը միայն բոլորովին չեն հավատում ուրվականների գոյությանը, իսկ 18 տոկոսը՝ կասկածում է:

Դե, ինչ, եթե հանգուցյալները կարող են վերադառնալ, գուցե դա էլ պատճառ դառնա, որ մարդիկ ավելի քիչ վախենան մահից:

Քիլլերը շփոթել էր զոհին

Անգլիացի Պոլ Ջոնսը 17 տարի կանցկացնի բանտում՝ սպանության համար: Ամիսներ առաջ նրան դիմեց լոնդոնյան գործարար Թոնի Բրիստոուն և բացատրեց, որ իր բիզնեսին խանգարում է ոմն Դուգլաս Բերնս, և հարկավոր է վերացնել իր մրցակցին: Պոլ Ջոնսը ընդունեց պատվերը, ստացավ վարձը և անցավ գործի: Քանի որ Ջոնսը շատ ցրված արարած էր, նա խառնեց հասցեն և սկսեց հետևել բոլորովին այլ զոհի, որը Բերնսի հարևանն էր:

Երբ այս հարևանի կինը՝ Մերի Բրումը, ամուսնուն հայտնեց, թե ինչ-որ կասկածելի արարած ամբողջ օրը պտտվում է տան շուրջը, ամուսինը՝ Էռնեստ Բրումը, դուրս եկավ բակ՝ իմանալու բանն ինչումն է:

Չախտրդ քիլլերը կրակեց և սպանեց Բրումին:

Նրա հարևանը՝ Դուգլաս Բերնսը, իմանալով եղելությունը, անմիջապես կռահեց, որ քիլլերի զոհը պետք է ինքը լիներ: Նա զանգահարեց պատվիրատուին՝ Թոնի Բրիստոուին և չարախնդալով տեղեկացրեց, որ նրա վարձած մարդասպանը սխալվել է, ապա զանգահարեց ոստիկանություն:

Հասկանալի է, որ սպանության պատվիրատու Թոնի Բրիստոուն նույնպես հայտնվեց բանտախցում:

Պաշտպանենք աչքերը սննդային հավելումներից

Ամերիկյան գիտնականները, ուսումնասիրելով ոչ ավանդական բժշկությանը նվիրված գրականությունը, հանգեցին անսպասելի հետևության: Պարզվեց, որ զանազան սննդային հավելումները և «ժողովրդական» բժշկության որոշ դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են բուժական նպատակներով և համարվում են բացարձակապես անվտանգ, կարող են լրջորեն վնասել տեսողությանը: Այնպիսի դեղամիջոցների օգտագործումը, ինչպիսիք են գինգկոն, էխինացիան, ինչպես նաև A վիտամին պարունակող վիտամինային խմբերը կարող են հանգեցնել աչքի ցանցաթաղանթի պաթոլոգիկ փոփոխությունների և վնաս հասցնել տեսողությանը:

Ատամները պետք է լվանալ

Այն մարդիկ, որոնք օրը երեք անգամ լվանում են ատամները, ավելի քիչ են տառապում գիրությունից: Այս եզրակացությանն են հանգել ճապոնացի հետազոտողները Տոկիոյի «Ջիկեյ» համալսարանի պրոֆեսոր Տակասի Վադոյի գլխավորությամբ:

Խմբի անդամները ուսումնասիրել են 14 հազար ճապոնացիների կենցաղը ներառած, թե նրանք ինչ են ուտում և խմում, որքան և ինչպես են աշխատում, ինչպես են քնում, ինչ ֆիզիկական վարժություններ կատարում:

Պարզվել է, որ նիհար, բարեկազմ արտաքին ունեցողները սովորություն ունեն ամեն ուտելուց հետո մաքրել ատամները, մինչդեռ առավել պարարտ մարմին ունեցողների մեջ գտնվել են այնպիսիները, որոնք մոռանում են նույնիսկ օրը մեկ անգամ լվանալ ատամները:

Ի դեպ, հետազոտության հեղինակները նախազգուշացնում են, որ ատամները հաճախ լվանալու սովորությունը ինքնին, ավելորդ ճարպերը այրելու միջոց չէ: Ավելի ճիշտ, կարծում են նրանք, խոսքը այն մասին է, որ նրանք, ում անհանգստացնում է ատամների վիճակը, բերանի հոտը և այլն, ավելի ուշադիր են իրենց տեսքի նկատմամբ ընդհանրապես: Գիտնականները համոզված են, որ նրանք, ովքեր կհետևեն «ատամները հաճախ մաքրել» կարգախոսին, ընդհանրապես ամեն ինչում կպահպանեն առողջ կենցաղի սկզբունքները, որն էլ կօգնի ազատվել ավելորդ քաշից, ինչն էլ տարբեր հիվանդությունների առաջացման աղբյուր է կամ առնվազն դրանք հրահրող հանգամանք:

Առնետները՝ ավազակների բարեկամներն են

Հնդկաստանի հանցագործները նոր դաշնակիցներ են ձեռք բերել: Առնետները, որ մեծ հաջողությամբ բազմանում են Հնդկաստանի քաղաքներում, հատկապես Դելիում, շատ մեծ հաճույքով բնակություն են հաստատում հետաքննությունների դաշնային գործակալության շենքում, նախնական կալանատներում, ոստիկանական բաժանմունքներում: Նման ընտրությունը բացատրվում է առնետների սննդի հայթայթման փնտրտուքների հետ և որկրամոլությամբ:



Պարզվում է, որ հիշյալ շենքերում առնետները քաղցած չեն մնում, ուտում են փաստաթղթերը, իրեղեն ապացույցները և դրանով իսկ օգնում չարագործներին և հանցագործ խմբավորումներին:

Առնետները հատկապես մեծ սեր ունեն բռնագրավված, ապօրինի պատրաստված ալիրտային խմիչքների նկատմամբ: Կրծողները հատկապես խենթանում են ալկոհոլի համար: Ոստիկանատներում այդ կեղծված օղիները պահվում են պլաստմասսայի ամաններում, որոնք առնետների սուր ատամների համար խոչընդոտ չեն կարող լինել: Ոստիկանները փորձեցին կատուներով գալ առնետների հախից: Սակայն հարբած առնետները չափազանց աներկյուղ են և արյունարբու: Նրանք հարձակվում են կատուների վրա և վայրկյանների ընթացքում պատառոտում ու հոշոտում:

Ալկոհոլային հանցախմբերը չափազանց գոհ են այս իրավիճակից. եթե փաստաթղթերը ինչ որ կերպ կարելի է վերականգնել, ապա կեղծված ալկոհոլը վերջնականապես անհետանում է առնետների փորում: Արդյունքում հանցանշանների բացակայության (իրեղեն ապացույցների) պատճառով հարկ է լինում ազատ արձակել չարագործներին:

Գիտություն
Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման
վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 25.12.2006թ.
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА